ԼՈՌԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 323 (479.25):36
ԳՄԴ 66.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94
L 792

L 792 **Լոռի: Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին.** - Եր.: Տնտես. բարեփոխումների վերլուծ. - տեղեկատվական կենտրոն, 2012. - 78 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Լոռու մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 323 (479.25) : 36
ԳՄԴ 65.3 (2Հ) + 65.9 (2Հ) - 94

ISBN 978-9939-9065-9-1

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Մարտիրոս Սարյան, Քարինջ գյուղի կոլտնտեսությունը Թումանյանի լեռներում (1952)

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Լոռի

Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Ջավախքի ու Հալաբի լեռնաշղթաների գրկում, Դեբեդի ու նրա վտակների հովիտներում, Աչքասարի, Թեժ լեռան ու Մայմեխի գագաթներից մինչև Դեբեդի ստորին հոսանքները տարածվել է Լոռին՝ տարածքի մակերեսով ու բնակչության թվաքանակով երրորդը Հայաստանի Հանրապետությունում: Հանրապետության մարզերում ամենամեծ թվով քաղաքային բնակավայրերը Լոռիում են: Գուգարքում՝ Վանաձորում և հարակից քսանմեկ գյուղական համայնքներում ապրում է լոռեցիների կեսից ավելին:

Լոռին քաղաքակրթության հնագույն օրրան է. մարդն այստեղ բնակվել է հին քարի դարում՝ շուրջ երկու միլիոն տարի առաջ: Գուգարքում հայտնաբերված հին քարի դարյան կայանը Արևմտյան Եվրասիայի՝ մարդու մինչև այժմ հայտնի հնագույն կայանն է: Վաթսուն դար առաջ հայն այստեղ քար ու մետաղ է մշակել, կառուցել է բերդեր ու կոթողներ այն նախապատմական ժամանակներում, որոնք բաբելոնյան

աշատարկի ու եգիպտական բուրգերի կառուցման օրերից հեռու էին նույնքան, որքան Քրիստոսի օրերը մեր ժամանակներից:

Լոռվա հնամենի հողում հայոց սերմը հարուստ բերք է տվել. պետական ու հասարակական գործիչներ, զորավարներ ու զորահրամանատարներ, գիտնականներ ու ճարտարագետներ, գրողներ ու բանաստեղծներ, մարզիկներ ու երաժիշտներ: Հաստափոր է Լոռու Փառքի մատյանը, նրա էջերը ողողված են անձնազոհ սխրանքի պատմություններով ու հերոսների հիշատակով:

Լոռու Փառքի մատյանի հերոսական էջերից ամենավեհը, թերևս, շուրջ մեկ դար առաջ «20-րդ դարի Ավարայրում»՝ Ղարաքիլիսայի հերոսամարտն է, ուր հայ ժողովուրդը հաստատեց պետականություն ունենալու և տասնյակ հազարավոր հայ գաղթականների ապրելու իրավունքը: Սարդարապատից ու Բաշ-Ապարանից հետո թևավորված հայ զինվորը Լոռվա հողում ուժասպառ արեց երկիր ներխուժած

ոսոխի դիվիզիաներն ու դուրս շպրտեց երկրից: Սակայն հայ զինվորի հերոսությունն ու հայ միաբան զորությունը դժվար է ավելի լավ բնութագրել, քան հակառակորդի զորահրամանատարի բառերով. «Ղարաքիլիսայում հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինորները»:

Սակայն Լոռու ամենամեծ հպարտությունը, թերևս, մարդու ու մարդկայինի չափանիշ՝ իր զավակներն են. նրանք, ում ժամանակակիցներն անվանել են «Սրտի դիկտատոր» ու «Ամենայն Հայոց Բանաստեղծ», նրանք, ում ստեղծագործությունների տառն ու քաղաքացիական ոգին սերունդներ են ձևավորում: Զաքարյան եղբայրներից ու Լոռվա մելիքներից մինչև Միկոյան եղբայրներ, Թումանյանից՝ մինչև Մաթևոսյան. մեծ լոռեցիների շքերթի մի ծայրը կորչում է պատմության հեռուներում, իսկ մյուսը շարժվում է դեպի հավերժը:

Մարդը

2007 թվականից սկսած՝ ծնվածների թվաքանակը Լոռու մարզում տարեցտարի ավելացել է, իսկ նշված ժամանակահատվածին նախորդող տասնամյակում ծնունդների թվի նվազումը Լոռու մարզում **փոխարինվել է աճով**: 2010 թվականին Լոռու մարզում ծնվածների թվաքանակը 2006 թվականի համեմատ ավելացել է մեկ վեցերորդով, իսկ 2010 թվականին ծնավածների թվաքանակի **տարեկան աճի տեմպով** Լոռու մարզը Հայաստանում զիջել է միայն Արագածոտնին:

Ծնելիությունը Լոռու մարզում 2002 թվականից աճել է:

Բնակչության թվաքանակը Լոռու մարզում (հազար մարդ)



Ծնվածների քանակը Լոռու մարզում 1000 բնակչի հաշվով (մարդ)



2010 թվականին Լոռու մարզում հազար բնակչի հաշվով ծնվել է 70 տոկոսով ավելի երեխա, քան 2001 թվականին:

2008 թվականից սկսած՝ Լոռիում տարեց-տարի ավելացել է բնակչության բնական աճը. 2010 թվականին Լոռու մարզում բնակչության բնական աճը 2007 թվականի համեմատ ավելացել է **2.5 անգամ**, մինչդեռ հանրապետությունում բնական աճը նույն ժամանակահատվածում ավելացել է մեկ հինգերորդով:

2008-2011 թվականներին Լոռու մարզում **նվազել է մանկական մահացությունը**. 2011 թվականին Լոռու մարզում մինչև մեկ տարեկան մահացածների թիվը հազար կենդանածնի հաշվով 2008 թվականի համեմատ նվազել է ավելի քան մեկ երրորդով:

2011 թվականին Լոռու մարզում 2001 թվականի համեմատ ավելի քան մեկ երրորդով ավելացել է ամուսնությունների թիվը:

Ամուսնությունների քանակը Լոռու մարզում (միավոր)



2003 թվականից սկսած՝ Լոռու մարզում տարեց-տարի նվազել է մեկնողների թիվը. 2010 թվականին Լոռուց մեկնել է կրկնակի պակաս մարդ, քան 2003 թվականին: 2007 թվականի համեմատ՝ Լոռու մարզից մեկնողների թիվը 2010 թվականին նվազել է 70 տոկոսով:

Լոռու մարզից մեկնողների քանակը (մարդ)



Տնտեսության սյուները

Լոռու մարզում տարեց-տարի **զգալիորեն ավելացել է** արդյունաբերական արտադրանքի ծավալը: 2008 թվականին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Լոռու արդյունաբերության աճը կանգնել էր, սակայն արդեն 2010 թվականին արդյունաբերական արտադրանքի ծավալը տարեկան աճել էր ավելի քան մեկ երրորդով, իսկ 2011 թվականին, նախորդ տարվա համեմատ, տարեկան աճը կազմել էր մեկ հինգերորդից

2011 թվականին Լոռու մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2001 թվականի գրեթե հնգապատիկն էր:

2011 թվականին հանրապետության մարզերում արտադրված արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալի 13 տոկոսը բաժին էր ընկնում Լոռու մարզին:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Լոռու մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ՀՀ մարզերում, 2011թ. (մլն. դրամ)



ավելի: Լոռին արդյունաբերական արտադրանքի ծավալով հանրապետության մարզերի թվում չորրորդն է:

2011 թվականին Լոռու մարզում արդյունաբերական համախառն արտադ-

Լոռին արտադրել է ընթացիկ գներով 70 տոկոսով ավելի ծավալով հանքագործական արդյունաբերության արտադրանք, քան հանրապետության յոթ մարզերն ու մայրաքաղաք Երևանը միասին:

ռանքի ծավալի շուրջ մեկ տասներորդը բաժին էր ընկնում հանքագործական արդյունաբերությանը: Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալով Լոռին **Հայաստանում երկրորդն է**՝ Սյունիքից հետո:

2007 թվականից ի վեր Լոռու մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքը տարեց-տարի միայն **ավելացել է**, այդ թվում՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում: 2010-2011 թվականներին՝ երկու տարում, Լոռու մարզում հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով **40 տոկոսով ավելի էր**, քան 2001-2009 թվականներին՝ ինը տարում միասին:

2011 թվականին Լոռիում հանքագործական արդյունաբերության արտադրանքն ընթացիկ գներով կազմել է 2007 թվականի ավելի քան յոթնապատիկը և 2009 թվականի կրկնապատիկը:

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալը Լոռու մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



Լոռու մարզում տարեց-տարի ավելացել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալը. 2011 թվականին Լոռու մարզում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալն ընթացիկ գներով **երկուսուկես անգամ գերազանցում էր** 2005 թվականի ծավալը:

Թեպետ Լոռու մարզում գործում են ընդհանուր հզորությամբ հանրապետությունում միայն Սյունիքի մարզին զիջող հանքագործական արդյունաբերության

ձեռնարկությունները, սակայն Լոռու արդյունաբերական արտադրանքի առյուծի բաժինը՝ **80 տոկոսը կազմում է** մշակող արդյունաբերությունը: 2011 թվականին Լոռին մշակող արդյունաբերության արտադրանքի համախառն ծավալով հանրապետության մարզերից զիջել է միայն Արարատին ու Կոտայքին, և առավել հզոր մշակող արդյունաբերական հզորություններ ունեցող մարզերի եռյակում է:

2011 թվականին Լոռու մարզում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով 2002 թվականի քառապատիկն էր, 2004 թվականի կրկնապատիկը և գրեթե մեկուկես անգամ գերազանցում էր մշակող արդյունաբերության արտադրանքի նախաճգնաժամային՝ 2006 թվականի ծավալը:

Արդյունաբերության կառուցվածքը Լոռու մարզում, 2011թ.



2010 թվականին հիմնային մետաղների արտադրության ծավալով Լոռին զիջել է միայն մայրաքաղաք Երևանին. 2010 թվականին Լոռու մարզում է արտադրվել Հայաստանում հիմնային մետաղների արտադրության ծավալի **մեկ քառորդից ավելին**: 2010 թվականին Լոռու մարզում հիմնային մետաղների արտադրության ծավալը **երկու անգամ ավելի էր**, քան հանրապետության մյուս մարզերում միասին:

Մշակող արդյունաբերության ծավալները Լոռու մարզում (մլրդ. դրամ)

Հիմնային մետաղների արտադրության ծավալները ՀՀ մարզերում, 2010թ.



2010 թվականին հանրապետության մարզերում քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության ծավալի շուրջ **30 տոկոսն արտադրվել է** Լոռու մարզում. արտադրության ծավալով Լոռին Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Արարատի մարզին:

Լոռու մարզը էլեկտրական սարքավորումների արտադրության **առաջա-**

2010 թվականին Լոռու մարզում արտադրվել են ավելի մեծ ծավալով էլեկտրական սարքավորումներ, քան հանրապետության մյուս մարզերում միասին:

տարն է հանրապետության մարզերում. 2010 թվականին Հայաստանում էլեկտրական սարքավորումների արտադրության համախառն ծավալի ավելի քան մեկ հինգերորդն արտադրվել է Լոռիում:

Էլեկտրական սարքավորումների արտադրության ծավալները ՀՀ մարզերում, 2010թ.



2010 թվականին Լոռիում արտադրվել է ավելի մեծ համախառն ծավալով հագուստ, քան հանրապետության մյուս մարզերում միասին:

2010 թվականին հագուստի արտադրության ծավալով Լոռին Հայաստանում զիջել է միայն մայրաքաղաք Երևանին և հանրապետության մարզերի **բացարձակ առաջատարն էր**: 2010 թվականին հանրապետությունում արտադրված հագուստի արտադրանքի ընդհանուր ծավալի մեկ հինգերորդից ավելին բաժին է ընկել Լոռու մարզին:

Հանրապետության մարզերում փայտանյութի մշակման, փայտից և խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից պատրաստված արտադրատեսակների ընդհանուր ծավալի գրեթե 45 տոկոսը:

2010 թվականին Լոռիում է արտադրվել հանրապետության մարզերում մշակված փայտանյութի, փայտից և խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից պատրաստված արտադրատեսակների ընդհանուր ծավալի գրեթե 45 տոկոսը:

Հագուստի արտադրության ծավալները ՀՀ մարզերում, 2010թ.



կեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրության ծավալով Լոռին Հայաստանում **զիջում է միայն** մայրաքաղաք Երևանին և Տավուշի մարզին:

2010 թվականին հանրապետության մարզերում արտադրված սննդամթերքի ծավալի շուրջ **12 տոկոսն** արտադրվել է Լոռիում:

Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու **«Էյ-Սի-Փի»** ընկերությունը, որը 2011 թվականին ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ավելի քան 72 տոկոսը, **Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը** (շուրջ 11.5 տոկոս), **«Ավտոգեն-Մ»** ընկերությունը (շուրջ 2 տոկոս), **Ձորահէկը** (1.6 տոկոս), **«Վանաձոր Քիմպրոմ»** և **«ԱՏ Գրեյն»** ընկերությունները (յուրաքանչյուրը մեկ տոկոսից ավելին):

Ախթալայի լեռնահարստացման կոմբինատում



Միայն 2011 թվականին Լոռու մարզում արդյունաբերության ոլորտում ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցել է **42 միլիարդ դրամը**: 2011 թվականին լիարժեք վերագործարկվել են Վանաձորի **«Բազում-Ֆիրմա»** և Սպիտակի **«Վանուհի»** ընկերությունները, գործարկվել է նոր փոքր հիդրոէլեկտրակայան՝ **«Կարբի Զրհոս»**-ը, ստեղծվել է ավելի քան **210 նոր աշխատատեղ**: Արտադրական հզորություններն ավելացրել է նաև նախկին **«Գլորիա»** կարի ֆաբրիկան, ինչի արդյունքում ստեղծվել է ավելի քան **140 աշխատատեղ**: Ընդհանուր առմամբ, 2011 թվականին Լոռու արդյունաբերության ոլորտում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է շուրջ **4,500 մարդ**, ինչը շուրջ 550-ով ավելի է՝ 2010 թվականի համեմատ:

«41 տարվա աշխատանքային ստաժ ունեմ: Կարող բանվորուհի եմ եղել, նախկինում աշխատել եմ Կիրովականի կարի ֆաբրիկայում: Իմ համար ամենակարևորն էն է, որ էս տարիքում աշխատանք ունեմ: Մինչև 70 հազար դրամ ու ավելի աշխատավարձ եմ ստանում, պարգևատրում էլ են տալիս: Ամուսնուս թոշակով ու իմ աշխատավարձով նորմալ ապրում ենք, կոմունալ վարձերը կարողանում ենք փակել, երեխեքիս էլ հարկ եղած դեպքում կարում եմ ձեռք մեկնեմ: Մեր ֆաբրիկայում իմ տարիքի էլի աշխատողներ կան: Գիտեք, կնոջ համար, էն էլ աշխատող, շատ դժվար է նստել տանն ու սպասել, թե երբ պիտի թոշակի գնա, իսկ ես ու իմ նման էլի շատ շատերն էստեղ աշխատանք ունենք: Մի երկու տարուց թոշակի եմ գնալու, բայց կուզենայի շարունակել աշխատել: Մարդը քանի դեռ ոտ ու ձեռի է, պիտի աշխատի»:

Սահակյան Լամարա, 61 տարեկան, 2004 թվականից աշխատում է «Բ.Դարբինյան-Ստիլիսսա»՝ ներկայում՝ «Սարթիս-Գլորիա» կարի ֆաբրիկայում

2010-2011 թվականներին **Ախթալայի լեռնահարստացման կոմբինատում** ընդհանուր ներդրումները կազմել են շուրջ **340 միլիոն դրամ**, վերակառուցվել է պոչամբարը, կառուցվել է շրջանառու ջրամատակարարման համակարգը, գործարկվել են հարստացուցիչ ֆաբրիկայի նոր ջարդիչը, հորատման հաստոցը և կոմպրեսորը, նոր արդյունաբերական էքսկավատորը: Ներդրումների շնորհիվ աճել են մակաբացման ծավալները, նոր պոչամբարում կառուցվել է ջրամատակարարման համակարգ՝ զգալիորեն **նպաստելով շրջակա միջավայրի պահպանմանը**: 2011 թվականին շահագործման է հանձնվել Այրում-Ճոճկան ձորում Նահատակ գետի վրա շրջանառվող ջրի համակարգը, ավարտվել է շահագործումից հանված առաջին պոչամբարի ռեկուլտիվացիան: 2010-2011 թվականներին կոմբինատում արդյունահանվել է շուրջ **530 հազար տոննա հանքաքար**, արտադրվել է ավելի քան **21.5 հազար տոննա պղնձի խտանյութ**, բացվել է **40 նոր աշխատատեղ**: 2011 թվականին կոմբինատում աշխատողների թիվը կազմել է **600 մարդ**, միջին աշխատավարձը՝ **140 հազար դրամ**:

2010-2011 թվականներին **Վալլեքս** խմբի ընկերությունները շարունակել են առաջատար դեր կատարել Լոռու տնտեսական կյանքում՝ ընդլայնելով գործունեությունը: Վալլեքս խմբի ընկերությունները արտադրանքի և արտահանման, ինպես նաև աշխատատեղերի ծավալներով մարզում առաջինն են. ընկերություններն աշխատանքով ապահովել են ավելի քան **1,200 մարդու**՝ շուրջ **127 հազար դրամ** միջին ամսական աշխատավարձով:

Լոռու մարզում արդյունաբերության առաջատար Վալլեքս խմբի մասնաշենքը



Խմբի անդամ **«Արմենիան քափըր փրոգրամ»** (Էյ-Սի-Փի) ընկերությունը 2010-2011 թվականներին վերակառուցել է արտացոլիչ վառարանը, ինչի արդյունքում 2011 թվականին նկատելիորեն բարձրացել է ընկերության արտադրողականությունը: 2012 թվականին պղնձի բարձր պարունակությամբ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի խտանյութի ավելի մեծ քանակությամբ վերամշակումը հնարավորություն կտա արտադրելու մոտ 10 հազար տոննա չզտված պղինձ: Միայն 2011 թվականին Էյ-Սի-Փի ընկերությունը **550 միլիոն դրամը** գերազանցող ներդրումներ է կատարել ներարտադրական ենթակառուցվածքներում. ներդրումների ավելի քան երկու երրորդը հատկացվել է նոր՝ նախկինի համեմատ շուրջ 220 մետրով բարձր ծխատարի վերակառուցմանը: Ծխատարի կառուցման արդյունքում զգալիորեն **նվազել է** գործարանի արտանետումների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

2011 թվականին **«Սագամար»** ընկերությունը գործարկել է Արմանիսի հարստացուցիչ կոմբինատը՝ ներդնելով ավելի քան **14.6 միլիոն ԱՄՆ դոլար**: Կոմբինատի գործարկման նպատակով, ընկերությունը հիմնանորոգել է Ստեփանավան-Արմանիս ավտոճանապարհի 4 կիլոմետր երկարությամբ հատվածը: Ընկերությունում աշխատում է շուրջ **360 մարդ**:

2011 թվականին **«Նյու թեքը»** և ճապոնական կապիտալով Շանհայում ու Մալայզիայում գործունեություն ծավալող **«Կոյո»** ընկերությունների միջև ստո-

Սագամար ընկերության ժամանակակից սարքավորումը



«2007 թվականի սեպտեմբերից մինչև 2011 թվականի հոկտեմբեր ամիսը «Սագամար» ՓԲԸ-ում մենք իրականացրել ենք մինչև 70 միլիոն ամերիկյան դոլարի ներդրում: 2011-2013 թվականներին նախատեսվում է ևս 23 միլիոն դոլարի ներդրում՝ ստորգետնյա հանքի կառուցման նպատակով»:

Կարեն Ղազարյան, «Նևա-Ռոս» ընկերության Հայաստանյան ծրագրի ղեկավար

ոագրվել է պայմանագիր՝ Սպիտակ քաղաքում վերելակների գործարան հիմնելու մասին: Սպիտակում մեկ տարվա ընթացքում, արագ տեմպերով կկառուցվի վերելակներ արտադրող գործարան, որտեղ **160 հազար դրամ միջին աշխատավարձով** աշխատանք կունենա **130 մարդ**: Գործարանը կգործարկվի 2012 թվականին:

2011 թվականին Վանաձորում բացվել է **«Ինստիգեյթ»** ընկերության մասնաճյուղը: Ընկերության կողմից Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղում կազմակերպվել են հնգամսյա հատուկ դասընթացներ, իսկ դրանց տասը մասնակիցների հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

2010-2011 թվականին Լոռու մարզի շուրջ **750 փոքր և միջին ձեռնարկություններ** հանրային միջոցների հաշվին ստացել են բազմակողմանի աջակցություն:

2010-2011 թվականներին պատրաստվել է Վանաձոր քաղաքի **տնտեսական քարտեզը**, և մշակման ու ներդրման փուլում է գտնվում Լոռու մարզի գործարար քարտեզագրման նոր համակարգը, որը հուսալի գործիք կհանդիսանա գործարարների համար:

Բազմաբնակարան շենքերի թաղամաս Ալավերդի քաղաքում

Լոռու մարզում 2011 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2009 թվականի համեմատ **ավելացել է 43 տոկոսով**:

2010 թվականին Լոռու մարզում անասնաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով 2001 թվականի համեմատ **ավելացել է մեկուկես անգամ**:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Լոռու մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Անասնաբուծության համախառն արտադրանքը Լոռու մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2011 թվականին Լոռու մարզում արևածաղկի բերքի ծավալը 2009 թվականի համեմատ **ութապատկվել է**, իսկ 2010 թվականի համեմատ՝ **ավելացել 2.4 անգամ**:

2010 թվականին Լոռու մարզում պտղի և հատապտղի տնկարկների տարածքները 2003 թվականի համեմատ կրկնակի ավելացել են:

Պտղի և հատապտղի տնկարկների տարածքները Լոռու մարզում (հա)



2011 թվականին Լոռու մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ մեկ քառորդով:

2011 թվականին իրացված անասունի և թռչնի քաշով Լոռին **երրորդն է** հանրապետությունում: 2011 թվականին Լոռու մարզում իրացվել է երեք քառորդով

Հավկիթի արտադրության ծավալները Լոռու մարզում (մլն. հատ)



ավելի անասունի և թռչնի միս, քան 2002 թվականին և մեկուկես անգամ ավելի, քան 2005 թվականին:

2002-2011 թվականներին Լոռու մարզում կաթի արտադրության ծավալն ավելացել է շուրջ 40 տոկոսով:

2003-2011 թվականներին Լոռու մարզում հավկիթի արտադրությունը կրկնակի ավելացել է:

2011 թվականին Լոռու մարզում մեղրի արտադրության ծավալը 2006 թվականի համեմատ ավելացել է շուրջ երեքուկես անգամ, իսկ 2009 թվականի համեմատ՝ շուրջ մեկ հինգերորդով:

2007-2011 թվականներին Լոռու մարզի ավելի քան տասնհինգ գյուղական՝ **Ձրաշեն, Գեղասար, Ագարակ, Օձուն, Յաղդան, Շիրակամուտ, Արևաշող, Նովոսելցովո, Կաթնաջուր, Ազնվաձոր, Հաղպատ, Այգեհատ, Սարչապետ, Դսեղ, Ճոճկան** համայնքներում և **Սպիտակ** քաղաքում հիմնանորոգվել են ոռոգման և ջրարբիացման համակարգեր, ջրավազաններ, մաքրվել և նորոգվել են կոլեկտորադրենաժային ցանցեր, կառուցվել ոռոգման ջրագծեր և երրորդ կարգի ջրանցքներ:

2010 թվականին Լոռու մարզում ոռոգվել է ավելի քան **երկու հազար հեկտար վարելահող** 2009 թվականի 980 հեկտարի համեմատ. միայն 2010 թվականին Լոռիում ոռոգվող հողատարածքների ընդհանուր մակերեսը ավելի քան **կրկնապատկվել** է:

Սպիտակի վերականգնված ինքնահոս համակարգի շնորհիվ բարելավվել է **3,6 հազար հեկտար** հողատարածքի ոռոգումը, ևս **400 հեկտար**՝ դարձել ոռոգելի: 2010 թվականին կառուցվել է **Շիրակամուտի** ավելի քան **5.5 կիլոմետր** երկարությամբ 820 միլիմետր տրամաչափի միջտնտեսային ջրանցքի մայրուղային հատվածը, վերակառուցվել է ջրանցքի գլխամասային ջրառ հիդրոհանգույցը: 2011 թվականին **Այգեհատ, Օձուն** և **Ճոճկան** համայնքներում վերակառուցվել է **5,4 հազար մետր** ընդհանուր երկարությամբ ոռոգման երրորդ կարգի ջրանցք:

2010 թվականին **Կարմիր Աղեգի** համայնքում **չորս** հեկտար վարելահողերի վրա կառուցվել է անձրևացման եղանակով ոռոգման համակարգ:

2010-2011 թվականներին Լոռու մարզի շուրջ **երկու հազար** գյուղացիական տնտեսությունների տրամադրվել է ընդհանուր առմամբ հարյուրավոր տոննաներով գարու և ցորենի բարձրորակ սերմացու: 2010-2011 թվականներին Լոռու մարզի համայնքներին տրամադրվել է ավելի քան **երկու տոննա թունանյութ**՝ կրծողների դեմ պայքարելու նպատակով:

2011 թվականին **Օձուն** և **Դսեղ** համայնքներում տեղադրվել են մեկական հակակարկտային կայաններ: **Գարգառ, Գյուլագարակ, Վարդաբլուր, Կուրթան** համայնքներում հակակարկտային կայաններ կտեղադրվեն 2012 թվականին:

Սպիտակում գործող **«Ագրոհոլիդինգ Արմենիա»** ընկերությունը անասնաբուծության մեջ օգտագործում է նորագույն տեխնոլոգիաներ. սարքավորումները ներմուծվել են եվրոպական երկրներից, իսկ անասունների խնամքը շատ բարձր մակարդակի է: 2009-2011 թվականներին ընկերությանը, պետական աջակցությամբ և տարաժամկետ վճարմամբ, հատկացվել է ավելի քան **580 գլուխ** շվից, հոլշտինյան և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ: Սպիտակի տնտեսությունում կիթն իրականացվում է ավտոմատ կթի սարքավորումներով և վերահսկվում համակարգչով, իսկ կաթնատվությունը կազմում է շուրջ **5.4 տոննա**, ինչը երկուսուկես անգամ գերազանցում է տեղական կովերի կաթնատվությանը: Առանձին կովերից ընկերությունը ստանում է մինչև 10 տոննա կաթ: Ընկերությունը նախատեսում է կովերի միջին կաթնատվությունը հասցնել 6.5-7 տոննայի: Ընկերությունն իրականացնում է նաև սելեկցիոն աշխատանքներ. բուծում է Եվրոպայից ներկրված բարձր կաթնատու և բարձր մսատու անասունների ցեղատեսակներ, եվրոպական և տեղական ցեղատեսակների միջև իրականացվում է խաչասերում: Բուծված ավելի քան **100 գլուխ** տոհմային երինջները մատակարարվել են հանրապետության գյուղացիական այլ տնտեսությունների: Ընկերությունն ունի բոլոր հարմարությունները՝ այդ թվում հանրակացարանային պայմաններ: 2011 թվականին միջին աշխատավարձն ընկերությունում կազմել է 1**35 հազար դրամ**:

Մաթևոս Վարդանյան՝ 24 տարեկան, Սպիտակի տարածաշրջանում գործող «Ագրոհոլդինգ Արմենիա» ընկերությունում աշխատում է որպես անասնաբույժ-անասնապահ: Մինչև այստեղ աշխատանքի անցնելը, պարտադիր զինծառայությունն ավարտելուց հետո, պայմանագրով աշխատել է Բավրայի սահմանապահ զորամասում: Այս տարվա մարտին նշանադրվել է: Մաթևոսը աշխատանքին զուգահեռ սովորում է Ագրարային համալսարանի երկրորդ կուրսում: «Ես էլ, ինչպես ֆերմայի մյուս աշխատողները ապրում եմ կազմակերպության տրամադրած բնակարանում: Գոհ եմ թե՛ պայմաններից, թե՛ աշխատավարձից: Էս աշխատանքի շնորհիվ էնքան արդեն վստահություն եղավ, որ որոշեցի քայլ անել ու ընտանիք կազմել: Երբ ամուսնանամ, կնոջս հետ կտեղափոխվենք, Սպիտակ քաղաքում տուն կվարձենք, էնտեղ կապրենք: Եղբայրս՝ Կարենն էլ է այստեղ աշխատում: Բանակից որ եկավ, բերեցի ինձ մոտ: Լավ աշխատանքն ու լավ տնօրինությունը հազվագյուտ բաներ են, բայց մեր մոտ այդ երկուսը մեր բախտից իրար հետ են»:

Միշա Չեչենցով, 54 տարեկան, նախկին զինվորական, թոշակառու, արդեն երկրորդ տարին է աշխատում է «Ագրոհոլդինգ Արմենիա» ընկերությունում որպես վարորդ. «Երկու երեխա ունեմ, երկու թոռ: Եկա աշխատելու, որովհետև համ դժվար էր պարապ մնալը, համ էլ թոշակով տուն չես պահի: Գոհ եմ իմ աշխատանքից, 120 հազար դրամ աշխատավարձ կստանամ: Մեծ մասը գումարի տուն կղրկեմ: Հրաշալի կոլեկտիվ է հավաքված, հրաշալի մարդիկ են նաև մեր հիմնարկի տերերը: Չեմ կարծում, որ ուրիշ տեղ էս կարգի պայմաններով գործ կկարողանայի ճարել»:

«Գումարներ ենք հատկացնելու պարարտանյութերի արտադրության վերականգնման համար, ինչը մեզ թույլ կտա, 2012 թվականից սկսած, արտադրել տարեկան 30,000 տոննա օրգանական պարարտանյութ՝ կարբամիդ և ևս 30,000 տոննա՝ կալիումական պարարտանյութ»:

Ալեքսանդր Սնեգիրյով, «Վանաձոր քիմպրոմ» ՓԲԸ կոմբինատի տնօրեն

2011 թվականին Լոռու մարզի հինգ՝ **Լորուտ, Աթան, Շամուտ, Դսեղ** և **Ահնիձոր** համայնքներում մշակվել են արոտավայրերի կառավարման պլաններ, բարելավվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող շուրջ **11.5 հազար հեկտար** արոտավայր, **յոթ հազար հեկտար** հեռագնա արոտներում տեղադրվել են խմոցներ, բարելավվել են ճանապարհները: Շուրջ **340 հեկտար** չմշակվող վարելահողերի վրա կազմակերպվել է մշակովի անասնակերի արտադրություն: Չորս համայնքներում ձևավորվել են արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ և համայնքների արոտավայրերի կառավարման ու անասնապահության զարգացման մարմիններ:

«Թեղուտ» ընկերությունը 2009-2011 թվականներին մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով կատարել է ավելի քան **141 հեկտար** անտառապատում. հետագա տարիներին անտառապատման ծավալներն ընկերությունը կհասցնի շուրջ **715 հեկտարի**:

2009-2010 թվականներին **Զրաշեն** և **Ծաղկաբեր** համայնքների անտառապատված տարածքներում իրականացվել են անտառմշակույթների լրացումներ: Արջուտ համայնքում իրականացվել է **50 հեկտար** տարածքի անտառապատում: Չկալով համայնքի ճանապարհի եզրերով՝ երկուսուկես կիլոմետր

Հոսքագիծ Տաշիր կաթի ֆաբրիկայում

երկարությամբ, տնկվել է **600 բարդի և հացենի**: Վանաձոր-Սպիտակ ավտոմայրուղու իններորդ կիլոմետրում գտնվող հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող հուշահամալիրի տարածքում տնկվել է **200 թխկի**:

2010-2011 թվականներին Լոռու մարզի անտառտնտեսություններում շուրջ **600 հեկտարի** վրա իրականացվել է նախորդ տարիների ընթացքում հիմնադրված անտառմշակույթների լրացում, խնամք՝ **340 հեկտարի** վրա, **100 հեկտարի** վրա հիմնադրվել են նոր անտառմշակույթներ: Աշխատանքները շարունակվում են 2012 թվականի գարնանը:

2011 թվականին Լոռու մարզում օրինական և ապօրինի ծառահատումների ընդհանուր ծավալը 2002 թվականի համեմատ նվազել է **հինգուկես անգամ**:

Լոռու մարզում 2010 թվականին իրականացված շինարարական աշխատանքների ծավալն ընթացիկ գներով 2004 թվականի ծավալի **եռապատիկն էր**: 2009-2010 թվականներին՝ երկու տարում, Լոռու մարզում իրականացված շինարարության ծավալն ընթացիկ գներով **գրեթե նույնքան էր**,

Շինարարության ծավալները Լոռու մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



2010 թվականին Լոռու մարզում գործարկվել են ընթացիկ գներով կրկնակի ավելի ծավալով հիմնական միջոցներ, քան 2008 թվականին:

որքան 2000-2004 թվականներին՝ հինգ տարում կատարված աշխատանքների ծավալը:

2010 թվականին Լոռու մարզում իրականացվել են **աննախադեպ ծավալի** շինմոնտաժային աշխատանքներ:

2010 թվականին Լոռիում իրականացված շինմոնտաժային աշխատանքների ծավալն ընթացիկ գներով 2001 թվականի աշխատանքների ծավալի եռապատկին էր:

2010 թվականին Լոռու մարզում շահագործման է հանձնվել նույնքան ընդհանուր մակերեսով բնակելի շենք, որքան 2007 թվականին հանրապետության բոլոր մարզերում միասին: 2003 թվականից մինչև 2010 թվականը նման մեծ ծա-

2010 թվականին Լոռու մարզում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը 2004 թվականի համեմատ տասներկու անգամ ավելի էր:

վալի շինարարություն Լոռու մարզում չէր իրականացվել: 2010 թվականին՝ մեկ տարում, Լոռու մարզում շահագործման է հանձնվել բնակելի շենքերի տասը

Լոռու մարզի բաժինը ՀՀ մարզերում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսում, 2010թ. (քառ. մ)



տոկոսով **ավելի ընդհանուր մակերես**, քան 2004-2007 թվականներին՝ չորս տարում միասին:

Լոռու մարզի բաժինը ՀՀ մարզերում շահագործման հանձնված հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական տեղերի քանակում, 2001-2010թթ



2001-2006 թվականներին հանրապետությունում շահագործման հանձնված հանրակրթական նոր հաստատությունների դպրոցների աշակերտական տեղերի թվով Լոռու մարզը հանրապետությունում զիջում է միայն Շիրակի մարզին. նշված ժամանակահատվածում Լոռիում շահագործման են հանձնվել ավելի **քան 5,300 աշակերտական տեղով** դպրոցներ:

2001-2010 թվականներին հանրապետության մարզերում պետական բյուջեի միջոցներով շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի **40 տոկոսը** շահագործման է հանձնվել Լոռու մարզում՝ երկրորդը Հայաստանի

2010 թվականին պետական բյուջեի միջոցներով Հայաստանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր երեք քառակուսի մետրից մեկը շահագործման է հանձնվել Լոռիում:

մարզերում՝ Շիրակից հետո: Միայն 2010 թվականին Հայաստանում պետական բյուջեի միջոցներով շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր

մակերեսի **35 տոկոսը** բաժին է ընկնում Լոռու մարզին: 2010 թվականին Լոռու մարզում պետական բյուջեի միջոցներով շահագործման է հանձնվել բնակելի շենքերի 26 անգամ ավելի ընդհանուր մակերես, քան 2004 թվականին և տասնապատիկ ավելի, քան 2008 թվականին:

Լոռու մարզի բաժինը ՀՀ մարզերում պետական բյուջեի միջոցների հաշվին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսում, 2010թ.



2001-2010 թվականներին մարդասիրական օգնության միջոցների հաշվին Հայաստանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի **գրեթե երեսուն տոկոսը** շահագործվել է Լոռու մարզում: Պետական գույքի սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին 2001-2002 թվականներին Հայաստանում բնակելի շենքերի շինարարություն իրականացվել է **բացառապես** երեք մարզերում, այդ թվում՝ Լոռիում:

2010 թվականին Լոռու մարզում շինարարական կազմակերպություններում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է ավելի քան 5,500 մարդ, իսկ 2011 թվականին արդեն՝ շուրջ 7,500՝ մեկ երրորդով ավելի:

2011 թվականին Լոռու մարզում շինարարական կազմակերպություններում աշխատողների միջին ցուցակային թիվը 2000 թվականի համեմատ ավելացել է գրեթե կրկնակի:

Լոռու մարզում 2001-2011 թվականներին մանրածախ առևտրի օբյեկտնե-րի թիվն ավելացել է շուրջ մեկ քառորդով:

Լոռու մարզում տարեց-տարի ավելացել է մանրածախ առևտրի շրջա-նառությունը: 2011 թվականին Լոռիում մանրածախ առևտրի շրջանառությունը նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ շուրջ 30 տոկոսով ավելի էր:

2011 թվականին Լոռու մարզում մանրածախ առևտրի շրջանա-ռությունը 2000 թվականի համեմատ ավելի քան կրկնապատկվել է՝ հատելով աննախադեպ 24.7 միլիարդ դրամի սահմանագիծը:

Մանրածախ առևտրի շրջանառությունը Լոռու մար-զում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

Խանութներում առևտրի շրջանառությունը Լո-ռու մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)

2011 թվականին Լոռու մարզում միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը եռապատիկ ավելի էր, քան 2000 թվականին և շուրջ 30 տոկոսով ավելի, քան նախաճգնաժամային 2007 թվականին:

Միջին հաշվով մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Լոռու մարզում (դրամ)

Խանութների շրջանառությունը Լոռու մարզում 2004 թվականի համեմատ ավելի քան **կրկնապատկվել է**, իսկ նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ՝ **ավելացել է** մեկուկես անգամ:

2011 թվականին Լոռու մարզում ծառայությունների ծավալը 2005 թվականի ծավալի կրկնապատիկն էր, իսկ 2008 թվականի համեմատ՝ ավելի էր մեկուկես անգամ:

2011 թվականին Լոռու մարզում ծառայությունների ծավալը 2009 թվականի համեմատ **ավելացել է** մեկ հինգերորդով:

Միայն 2010 թվականին՝ մեկ տարում, Լոռու մարզում մշակույթի, զվարճությունների և հանգստի ծառայությունների ծավալն **ավելացել է շուրջ 7.6 անգամ**:

2010 թվականին Հայաստանում կրթության ծառայությունների ծավալով

Ծառայությունների ծավալը Լոռու մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



Լոռու մարզը զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին և Շիրակին: 2010 թվականին հանրապետության մարզերում կրթության ծառայությունների ծավալի շուրջ **մեկ քառորդը** բաժին է ընկել Լոռու մարզին:

2010 թվականին հանրապետության մարզերում տեղեկատվության և կապի ծառայությունների ամենամեծ ծավալը Լոռու մարզում էր: 2010 թվականին

2010 թվականին Լոռու մարզում կրթության ծառայությունների ծավալը 2004 թվականի կրկնապատիկն էր:

Կրթության ոլորտում մատուցած ծառայությունների ծավալը ՀՀ մարզերում, 2010թ. (մլն. դրամ)



Լոռու մարզում տեղեկատվության և կապի ծառայությունների ծավալը 2004 թվականի նկատմամբ **կրկնապատկվել է**:

Տեղեկատվության և կապի ոլորտում մատուցած ծառայությունների ծավալը ՀՀ մարզերում, 2010թ. (մլն. դրամ)



2005-2010 թվականներին Լոռու մարզում տրանսպորտի ծառայությունների ծավալն **ավելացել է 30 տոկոսով**:

Արտահանման ծավալով Լոռին Հայաստանում երրորդն է՝ զիջելով միայն մայրաքաղաք Երևանին և Սյունիքին. 2011 թվականին Լոռուն բաժին է ընկել հանրապետության մարզերի արտահանման ծավալի **մեկ հինգերորդից ավելին**:

2011 թվականին Լոռու մարզում արտահանման ծավալը 2000 թվականի համեմատ ավելացել է **գրեթե քսանապատիկ**, 2003 թվականի համեմատ՝ **վեցապատիկ** անգամ, 2006 թվականի համեմատ գրեթե **կրկնապատկվել** է, իսկ 2010 թվականի համեմատ՝ **ավելացել է մեկ քառորդով**:

2010 թվականին Լոռու մարզում արտահանման **ծավալը գերազանցել է աշխարհում մեծությամբ տասնյոթերորդ տնտեսությունն ունեցող հարևան Թուրքիայի 40** նահանգների, այդ թվում՝ մինչև 1921 թվականը Հայաստանի Հանրապետության կազմում գտնվող Արևելյան Հայաստանի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի պատմական տարածքներն ընդգրկող՝ Կարս, Երզինջան (Երզնկա), Բայբուրթ (Բաբերդ), Արդահան, Արդվին, Բիթլիս, Մուշ, Վան,



Էրզրում, Իգդիր, Էլայզիգ (Խարբերդ), Ամասիա, Սվազ, Բաթման, Բինգյոլ և այլ նահանգների արտահանման ծավալները:

2010 թվականին Լոռու մարզում արտահանման ծավալը գերազանցել է Թուրքիայի տասնհինգ նահանգների արտահանման ծավալները միասին վերցրած:

Լոռու մարզի տնտեսության իրական հատվածն ավելի ու ավելի է հետաքրքրական և գրավիչ դառնում Հայաստանի բանկային հատվածի համար: Լոռու քաղաքներում, գլխավորապես Վանաձորում, բացվում են բանկերի նոր մասնաճյուղեր, բանկերի տրամադրած վարկերի ծավալը տարեց-տարի աճում է: 2011 թվականին Լոռու մարզում գործում էին առևտրային բանկերի **30 մասնաճյուղեր**: 2011 թվականին Վանաձորում իրենց գործունեությունն են սկսել Հայաստանի ևս երկու բանկի՝ **«Զարգացման Հայկական բանկ»** և **«Ամերիա բանկ»** ՓԲԸ-ների մասնաճյուղերը: «Ամերիաբանկի» նորաբաց «Վանաձոր» մասնաճյուղը թե՛ տեխնիկական հագեցվածությամբ, թե՛ սպասարկման մակարդակով ու տրամադրվող ծառայությունների ամբողջականությամբ չի տարբերվում մայրաքաղաքում գործող մասնաճյուղերից:

2011 թվականին Լոռու մարզում ութ բանկեր տրամադրել են **մեկական միլիարդ դրամից ավելի վարկեր**: Տրամադրած վարկերի ծավալով առաջատարը **ԱԳԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկն** է:

Միայն Վանաձորում 13 բանկերի մասնաճյուղերի կողմից, 2011 թվականի ընթացքում ձեռնարկություններին և ֆիզիկական անձանց տրամադրվել են **27 միլիարդ դրամ** ընդհանուր ծավալով վարկեր՝ 2010 թվականի համեմատ շուրջ յոթ միլիարդ դրամով՝ մեկ երրորդով ավելի: 2011 թվականին Լոռու մարզում առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2007 թվականի համեմատ **ավելացել է հնգակի**, իսկ 2009 թվականի համեմատ՝ **կրկնապատկվել** է:

2009-2011 թվականներին Լոռու մարզում առևտրային բանկերի վարկային պորտֆելի շուրջ 45 տոկոսն ուղղվել է բնակչությանը տրամադրված սպառողական վարկերին, իսկ շուրջ մեկ երրորդը՝ առևտրի և սպասարկման ոլորտի վարկավորմանը:

2011 թվականին Լոռու մարզում առևտրային բանկերի կողմից արդյունաբերության վարկավորման ընդհանուր ծավալը 2007 թվականի համեմատ աճել է շուրջ **երեքուկես անգամ**, իսկ 2009 թվականի համեմատ՝ 2.2 անգամ:

2011 թվականին Լոռու մարզում առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ընդհանուր ծավալը 2007 թվականի համեմատ աճել է **ավելի քան երեքուկես անգամ**, իսկ 2009 թվականի համեմատ՝ **մեկուկես** անգամ:

2011 թվականին Լոռու մարզում առևտրային բանկերի կողմից առևտրի և սպասարկման ոլորտում ձեռնարկությունների վարկավորման ընդհանուր ծավալը 2007 թվականի համեմատ աճել է ավելի քան **երեքուկես անգամ**, իսկ 2009 թվականի համեմատ՝ ավելի քան **կրկնապատկվել է**:

2011 թվականին Լոռու մարզում առևտրային բանկերի կողմից տրամադրված հիպոթեքային վարկերի ընդհանուր ծավալը 2007 թվականի համեմատ աճել է ավելի քան **վեցուկես անգամ**, իսկ 2009 թվականի համեմատ՝ **80 տոկոսով**:

2011 թվականին Լոռու մարզում առևտրային բանկերի կողմից մարզի բնակիչներին տրամադրված սպառողական վարկերի ընդհանուր ծավալը 2007 թվականի համեմատ աճել է **ավելի քան տասնապատիկ**, իսկ 2009 թվականի համեմատ՝ կրկնակի չափով:

Ենթակառուցվածքներ

Լոռու մարզում 2005 թվականից տարեց-տարի **ավելացել է** ուղևորափոխադրումների ծավալը, որը նախորդ տասնամյակում աստիճանաբար նվազել էր. 2004 թվականին ուղևորափոխադրումների ծավալը Լոռու մարզում կրճատվել էր 2.4 անգամ: Այդուհանդերձ, հետագա տարիներին

Ուղևորափոխադրումների ծավալը Լոռու մարզում (հազ. մարդ)



տնտեսության ակտիվացման, զբոսաշրջության զարգացման ու ուղևորափոխադրումների բնագավառում կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում 2010 թվականին Լոռու մարզում ուղևորափոխադրումների ծավալը գերազանցել էր 2004 թվականի ցուցանիշը ավելի քան **2.8 անգամ**:

2007-2010 թվականներին՝ չորս տարում, Լոռու մարզում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել է գրեթե երկու միլիոն ուղևոր՝ ավելի, քան նախորդ վեց տարիներին՝ 2001-2006 թվականներին միասին:

2009-2010 թվականներին հանրապետության մարզերում փոխադրված յուրաքանչյուր հինգերորդ ուղևոր փոխադրվել է Լոռիում:

Ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալով Լոռու մարզը հանրապետությունում **երրորդն է**՝ զիջելով միայն մայրաքաղաք Երևանին և Կոտայքի մարզին. 2010 թվականին հանրապետության մարզերում ուղևորաշրջանառության ծավալի գրեթե **մեկ հինգերորդը** բաժին է ընկել Լոռուն:

2010 թվականին Լոռու մարզում ուղևորաշրջանառության ծավալը՝ ավելի քան **90 միլիոն ուղևոր կիլոմետր**, շուրջ 70 տոկոսով **գերազանցել է** 2005 թվականի ուղևորաշրջանառության ծավալը:

Լոռու մարզում գործում են ավելի քան 75 ներմարզային և ավելի քան 30 ներքաղաքային կանոնավոր փոխադրումների երթուղիներ, որոնք սպասարկում են ավելի քան 20 ավտոտրանսպորտային ձեռնարկություններ, գործում է **«Հարավկովկասյան երկաթուղու»** Գյումրի-Այրում հատվածը՝ տասներեք կայարաններով, ներքաղաքային կանոնավոր փոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում:

2007-2011 թվականներին Լոռու մարզի **23 համայնքներում** հիմնանորոգվել են ավտոմոբիլային ճանապարհներ ու կամուրջներ, ասֆալտապատվել և խճապատվել են ներհամայնքային փողոցներ:

Վերանորոգվել է **Մոտկորի ձորի վեց համայնքները** միմյանց և հիմնական մայրուղուն կապող միջհամայնքային ճանապարհը: Նոր տեխնոլոգիաների կի-

ռառմամբ կառուցվել է շուրջ **36 կիլոմետր երկարությամբ** խճապատ գրունտային ճանապարհ, ինչն էական նշանակություն ունի հիմնականում անասնապահությամբ զբաղվող համայնքների զարգացման համար:

Լոռու մարզի բոլոր քաղաքների միջազգային և միջքաղաքային կապուղիների թվային տրանսպորտային համակարգերը 2007-2011 թվականներին **վերափոխվել են** նոր, ժամանակակից և բարձր ունակությամբ հզոր համակարգերով՝ մարզի բնակիչներին ապահովելով արագընթաց կորպորատիվ և ինտերնետ կապով: Մարզի գրեթե բոլոր գյուղական բնակավայրերի նախկին անալոգային հեռախոսակայանները շահագործումից հանվել են և բաժանորդային գծերը վերամիացվել են CDMA համակարգին, գործում են **13 CDMA կայաններ**՝ ավելի քան 10,300 բաժանորդով: ADSL կապի բաժանորդների թիվը Լոռու մարզում անցնում է 3,260-ից: 2011 թվականին Լոռու մարզում գործում էր **չորս տասնյակից ավելի** բջջային կայան:

Լոռու մարզում 2011 թվականին գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը կրկնակի գերազանցել է ցանցի 2001 թվականի երկարությանը:

2011 թվականին Լոռու մարզի գյուղական համայնքներում գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2006 թվականի համեմատ **ավելացել է երկու երրորդով**, իսկ քաղաքային համայնքներում՝ մեկ հինգերորդով: 2011 թվականին հանրապետության քաղաքային համայնքներում գազամատակա-

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Լոռու մարզում (կմ)



ռարման ցանցի երկարությամբ Լոռին զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին և Շիրակին:

2010 թվականին Լոռու մարզում գազամատակարարման գործող ցանցի երկարությունը գերազանցում էր աշխարհի, այդ թվում՝ ԱՊՀ և Եվրամիության այնպիսի երկրների գազի բաշխիչ գործող ցանցի երկարությանը, որոնք տարածքով, բնակչությամբ և կենսամակարդակով զգալիորեն գերազանցում են Լոռու մարզին, օրինակ՝ Ղըրղըզստանը, Կիպրոսը, Ֆիլիպինները, Լիբանանը, Սինգապուրը, Իսրայելը, Ֆինլանդիան, Շվեդիան, Սլովենիան, Էստոնիան, Լատվիան, Մակեդոնիան, Տայվանը և այլն:

Եթե 2002 թվականին Լոռու մարզում գազաֆիկացված էր յուրաքանչյուր հինգ բնակարանից և բնակելի տնից հազիվ մեկը, ապա 2011 թվականին գազամատակարամամբ ապահովվել է մարզի բնակարանների և բնակելի տների երկու երրորդը, իսկ քաղաքներում՝ յուրաքանչյուր չորս բնակարանից և բնակելի տնից երեքը:

Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը Լոռու մարզում (միավոր)



Եթե 2002 թվականին Լոռու մարզում գազաֆիկացված էր շուրջ 14,000 բնակարան և բնակելի տուն, ապա 2011 թվականի տարեսկզբին՝ ավելի քան 60,000՝ քառապատիկ ավելի:

2007-2010 թվականներին Լոռու մարզի գյուղական համայնքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակն **ավելացել է** 28 տոկոսով:

Հանրապետության մարզերի քաղաքային համայնքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների **ամենամեծ քանակը** Լոռու մարզում է. Հայաստանի մարզերի քաղաքներում գազաֆիկացված յուրաքանչյուր հինգերորդ բնակարան կամ բնակելի տուն Լոռիում է:

Լոռու մարզի բաժինը ՀՀ մարզերի քաղաքային բնակավայրերի գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների ընդհանուր քանակում, 2010թ.



2006-2010 թվականներին Լոռու սպառողներին մատակարարված գազի ծավալը մեկ տասներորդով **ավելացել է**:

2010 թվականին Լոռու մարզում սպառողներին մատակարարվել է կրկնակի ավելի, իսկ մարզի գյուղական համայնքներում՝ ութապատիկ ավելի ծավալով բնական գազ, քան 2001 թվականին:

Բոլոր սպառողներին բաց թողնված գազի ծավալները Լոռու մարզում (մլն. խմ)



2007-2011 թվականներին Լոռու մարզի հինգ քաղաքային և տասնութ գյուղական համայնքներում իրականացվել են գազաֆիկացման ծավալուն աշխատանքներ. գազաֆիկացվել են **Սվերդլով, Մարց, Լեռնապատ, Քարինջ, Լեռնավան, Հաղպատ, Սարչապետ, Մղարթ, Գյուլագարակ, Դսեղ, Մեծ Այրում և Փոքր Այրում, Նոր Խաչակապ, Արծնի, Շիրակամուտ, Ղուրսալ, Փամբակ, Լեռնանցք** համայնքները, **Ստեփանավան** քաղաքում՝ չորրորդ միկրոշրջանը, Տաշիր ու Բանավան թաղամասերը, **Ալավերդի** քաղաքի Սանահին թաղամասը, **Վանաձորի** Բուլղարական թաղամասը, **Սպիտակ** քաղաքում՝ Վարպետաց, փախստականների, և Գրիգոր Լուսավորիչ թաղամասերը, **Ախթալայում**՝ Բարիտ և Սվինեց թաղամասերը, Շահումյանի ամառանոցներին հարող թաղամասը: **Կողես** և **Յաղդան** համայնքներում վերանորոգվել են գազամատակարարման համակարգեր, կառուցվել են միջին ճնշման գազատարեր:

2010 թվականին Լոռու մարզում գազաֆիկացվել են նաև **36 ձեռնարկություններ**, այդ թվում՝ ութ արտադրական և շուրջ երեսուն կոմունալ-կենցաղային հաստատություններ:

2011 թվականին Լոռու մարզում վերգետնյա կառուցման եղանակով վերատեղադրվել են ավելի քան **4 հազար** մետր ընդհանուր երկարությամբ միջին և ցածր ճնշման գազատարներ, վերատեղադրվել են վթարային գազատարեր:

2010-2011 թվականներին Լոռու մարզում միջին ճնշման գազաբաշխիչ համակարգում տեղադրվել են երկու տասնյակ գլխամասային հաշվիչ հանգույցներ՝ ժամանակակից գազահաշվիչներով:

2010 թվականին Լոռու մարզում բազմաբնակարան շենքերի և նոր գազաֆիկացվող առանձնատների ներտնային գազահամակարգերում տեղադրվել է ավելի քան **22,600 անվտանգության համակարգ**:

Լոռու մարզում 2010 թվականին խմելու ջրի մատակարարման ցանցի ընդհանուր երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելի էր** գրեթե 30 տոկոսով: 2004-2010 թվականներին Լոռու մարզում խմելու ջրի մատակարարման փողոցային ցանցի երկարությունն ավելացել է ութ տոկոսով:

Բնակավայրերի փողոցային ջրատար ցանցերի միագիծ երկարությունը Լոռու մարզում (կմ)



2002-2010 թվականներին Լոռու մարզում ջրամատակարարման ցանցերում կատարված աշխատանքների և կառավարման ավելի արդյունավետ համակարգերի ներդրման արդյունքում **կրճատվել են** խմելու ջրի կորուստները. 2010 թվականին Լոռու մարզում սպառված ջրի ծավալը 2002 թվականի համեմատ կրճատվել է գրեթե երկուսուկես անգամ:

2007-2011 թվականներին Լոռու մարզի **6 քաղաքային** և **32 գյուղական** համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավ-

ման նպատակով իրականացվել են մեծ ծավալի աշխատանքներ. կառուցվել են խմելու ջրի ջրագծեր, վերականգնվել, վերակառուցվել և հիմնանորոգվել ջրամատակարարման ցանցեր և կոյուղագծեր:

2009 թվականին **Ձորամուտ** համայնքում կառուցվել է ջրամբար և հինգ կիլոմետր երկարությամբ ջրատար և ջրամատակարարման ներքին ցանց, որի արդյունքում երկրի հյուսիսային սահմանին կանգնած գյուղական համայնքի 120 ընտանիք ապահովվել է շուրջօրյա ջրամատակարարմամբ:

2007-2011 թվականներին Լոռիում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն է ուղղվել կապիտալ ներդրումների մեկ քառորդից ավելին:

2007-2011 թվականներին հանրապետության մարզերում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների շուրջ մեկ հինգերորդը հատկացվել է Լոռու մարզին, ընդ որում ֆինանսական միջոցների ավելի քան 90 տոկոսը հատկացվել է 2011 թվականին:

Լոռու մարզում 2010 թվականին բարեկարգված քաղաքների փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը 2001 թվականի համեմատ **ավելացել է** ութ տոկոսով:

Վանաձոր քաղաքում գործում է կենցաղային աղբի տեսակավորման և օգտահանման արտադրամաս, որի հզորությունները թույլ են տալիս տեսակավորել ամբողջ քաղաքի և հարակից համայնքների կենցաղային աղբը: 2012 թվականին Լոռու մարզի քաղաքային համայնքներում կստեղծվեն կենցաղային աղբի օգտահանման նոր արտադրամասեր: **Վանաձոր** և **Ալավերդի** քաղաքներում տեղադրվել են պլաստիկ թափոնների հավաքման համար նախատեսված հատուկ աղբարկղեր:

Տունը

Հանրապետության մարզերում բնակարանային ֆոնդի **ամենամեծ ընդհանուր մակերեսը** մայրաքաղաք Երևանից և Արմավիրից հետո Լոռու մարզում է: Քաղաքային բնակավայրերում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսով Լոռու մարզը զիջում է միայն մայրաքաղաք Երևանին:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Լոռու մարզում, 2011թ. (հազ. քմ)



2011 թվականին Լոռու մարզում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2000 թվականի համեմատ **մեկուկես անգամ ավելի էր**: Նույն ժամանակահատվածում Լոռու քաղաքային համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսն ավելացել է շուրջ մեկ երրորդով, իսկ գյուղական համայնքներում՝ շուրջ 80 տոկոսով:

2011 թվականին Լոռու մարզում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2000 թվականի համեմատ եռապատկվել է, իսկ մարզի քաղաքային համայնքներում նույն ժամանակահատվածում ցուցանիշն ավելացել է գրեթե 3.8 անգամ:

2011 թվականին քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակով Լոռին Հայաստանում զիջում էր միայն մայրաքա-

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Լոռու մարզում (քմ)

ղաք Երևանին և Կոտայքի մարզին, իսկ բնակելի տների (առանձնատների) քանակով հանրապետության մարզերում առաջինն է:

2011 թվականին Լոռու մարզի քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ մեկ տասներորդով, իսկ առանձնատների քանակը՝ շուրջ 40 տոկոսով: Նույն ժամանակահատվածում Լոռու գյուղական համայնքներում բնակելի տների քանակն **ավելացել է** մեկ հինգերորդով, իսկ դրանց ընդհանուր մակերեսը՝ ավելի քան 80 տոկոսով:

Գյուղական բնակավայրերի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Լոռու մարզում (քմ)



2010 թվականին հանրապետության մարզերում բնակելի տների առուվաճառքի ամենամեծ թվով գործարքներն իրականացվել են Լոռիում:

2010 թվականին Լոռու մարզում բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2000 թվականի համեմատ ավելացել է շուրջ 60 տոկոսով: Նույն ժամանակահատվածում Լոռիում բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն **ավելացել է վեցապատիկ**:

2010 թվականին Լոռու մարզում հողերի, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության, առուվաճառքի գործարքների քանակը 2002 թվականի համեմատ **տասնվեցապատիկ էր**, իսկ 2006 թվականի համեմատ՝ կրկնապատիկ:

2007-2011 թվականներին Լոռու մարզում կատարված կապիտալ ներդրումային ծրագրերի գրեթե 45 տոկոսն ուղղվել է բնակարանաշինությանը, ընդ որում, ներդրումների շուրջ 90 տոկոսն իրականացվել է միայն 2011 թվականին: 2007-2011 թվականներին հանրապետության մարզերում բնակարանաշինությանն ուղղված ներդրումների շուրջ 30 տոկոսը հատկացվել է Լոռու մարզին՝ Շիրակից հետո երկրում հանրային միջոցների հաշվին իրականացված բնակարանաշինության ամենամեծ ծավալը:

Բնակարանաշինությանն ուղղված կապիտալ ծախսերի բաժինը Լոռու մարզում 2007-2011թթ.՝ իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում



Երկրաշարժից հետո ամուսնանալ ու «դոմիկ» հարս գնալն ամոթ բան չէր: Բոլորն էին այդ կարգավիճակում Սպիտակ քաղաքում: Ամոթը տուն կամ նույն այդ «դոմիկը» չունենալն էր: Երեսունվեցամյա Անահիտ Սահակյանն էլ տասնչորս տարի առաջ իրենց «դոմիկից» հարս գնաց ամուսնու «դոմիկ», մի տասը տարի էլ ապրեց այդ պայմաններում, երկու զավակ լույս աշխարհ բերեց: Սակայն, տնակի անտանելի պայմաններին չդիմանալով, Լամբարյան Նիկողոսն ու Սահակյան Անահիտը վերջին մի քանի տարին որոշում են քաղաքի բնակելիներից մեկում վարձով բնակվել: «Որովհետև այլևս հնարավոր չէր դոմիկում ապրել, լրիվ փտել էր, կռիշից կաթում էր,– բացատրում է Անահիտը,– մենք էլ որոշեցինք երեխաներին վերցնել տեղափոխվել: Գիտեինք, որ շուտով տուն ենք ստանալու, բայց որ էսպիսի գեղեցիկ ու հարմարավետ կլինի, չէինք պատկերացնում: Եկել ենք, մեր իրերը բերել դրել ու ապրել ենք, ոչ մի փոփոխություն չենք արել»:

Լամբարյանների ընտանիքն արդեն երկրորդ տարին է բնակվում է Սպիտակ քաղաքի նորակառույց Վարպետների թաղամասում: Երկրաշարժից հինգ հարկանի շենքում երեք սենյականոց բնակարան կորցրած ընտանիքը պետության կողմից, որպես փոխհատուցում, ստացել է առանձնատուն:

«Ռեմոնտն արած, ջուրը մեջը, գազը մեջը, բաքսին քաշած, ուրիշ ինչ պիտի ուզեինք,– շարունակում է տանտիրուհին,– մի քիչ խոհանոցն է փոքր, բայց դե արդեն հարմարվել եմ: Թաղամասը ասֆալտած է, կարևորը՝ մաքուր է, չենք ընկնում ցեխերը: Ճիշտ է, էսպես որ նայում եք, ոնց որ թե քաղաքի ծայրամսում ենք, բայց տրանսպորտը նորմալ աշխատում է, դպրոցն ու մանկապարտեզը՝ կողքներիս, հիվանդանոցն էլ է մեզ շատ մոտ: Թաղը նոյեմբեր ամսին հանձնեցին շահագործման, մենք դեկտեմբերին արդեն եկել ապրում էինք: Շատ շատերի համար քսաներեք տարի վագոն-տնակում ապրելուց հետո, էս առանձնատները, կարելիա ասել, ապարանք են»:

Նիկողոս Լամբարյանի համոզմամբ Սպիտակում ապրող և երկրաշարժից բնակարան կորցրած ընտանիքների մեծ մասն այլևս հնարավորություն չունեին ոչ տուն կառուցելու, ոչ էլ գնելու: Ինքն, օրինակ, մի չորս տարի առաջ կարողացել էր կենցաղային որոշ իրեր գնել՝ հյուրասենյակի և խոհանոցի կահույք, բայց երբեք չի մտածել, որ գումար հետ կգցի ու տան հարց կլուծի: «Որովհետև իմ աշխատավարձով դա անելն անհնար էր: Հետո մենք տուն էինք կորցրել ու ուզեինք չուզեինք պիտի սպասեինք, թե երբ փոհատուցումը կստանանք: Պետության էս նվերին, ճիշտ է, երկար սպասեցինք, բայց արժեր,– զրույցը եզրափակում է Նիկողոս Լամբարյանը»:

2007-2011 թվականներին Լոռու **ութ քաղաքային** և **23 գյուղական** համայնքներում կառուցվել, հիմնանորոգվել և վերանորոգվել են բազմաբնակարան շենքեր և բնակելի տներ:

Սպիտակի Վարպետաց թաղամասում կառուցվել են **110 երկու սենյականոց** և **նույնքան երեք սենյականոց** առանձնատներ, շահառուները վիճակահանությամբ ստացել են բնակարաններ: Միայն 2011 թվականին շուրջ **500 բնակարան** կառուցվել է Սպիտակում և հարակից համայնքներում, ավելի քան **35 բնակարան** կառուցվել է **Վանաձորում**:

2010 թվականին Լոռու մարզի ութ՝ **Շիրակամուտ, Գոգարան, Մեծ Պարնի, Գեղասար, Սարահարթ, Արևաշող, Լուսաղբյուր, Հարթագյուղ** համայնքներում շահագործման է հանձնվել **157 բնակելի տուն**, տրամադրվել են հավաստագրեր:

2011 թվականին Լոռու մարզի գյուղական համայնքներում երկրաշարժից տուժած բնակիչների համար կառուցվել է շուրջ **170 բնակելի տուն**, այդ թվում՝ **Ձրաշենում**՝ 77, **Լեռնանցքում**՝ 17, **Արևաշողում**՝ 16, **Կաթնաջրում**՝ 15, **Սարամեջում**՝ 30, **Ծաղկաբերում**՝ 5, **Լեռնավանում**՝ 3, **Շիրակամուտում**՝ 3, **Լուսաղբյուրում** և **Հարթագյուղում**՝ մեկական տուն, ընթացքում է շուրջ երեք հարյուր բնակելի տների կառուցումը:

2007-2011 թվականներին **Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան, Թումանյան, Տաշիր, Շամլուղ, Ախթալա, Ձորագետ, Շահումյան, Գուգարք** համայնքներում վերանորոգվել են տասնյակ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ, շքամուտքեր և վերելակներ, բարեկարգվել են բնակելի շենքերի բակերը:

2007-2011 թվականներին **Փամբակ** համայնքի կայարանամերձ տարածքում մայրուղու քարաթափման վտանգավոր գոտում գտնվող բնակելի տների բնակիչների, իսկ **Ղուրսալ** համայնքում՝ փախստականների համար գնվել են նոր բնակելի տներ:

2011 թվականին **Ստեփանավան** քաղաքի բնակիչ, պայմանագրային զինծա-

«Չեմ հավատացել ու ինձի զարմանք մնաց, թե էսքան ժամանակում ինչպես հնարավոր եղավ տուն շինել... հրաշք էր, հրա՛շք»:

Վալիչկա Սաղաթելյան, Շիրակամուտի բնակիչ

ռայող շարքային **Արտակ Ղաբուզյանի** հինգ անձից բաղկացած ընտանիքին հատկացվել է երեք սենյականոց բնակարան: Արտակ Ղաբուզյանը 2010 թվականին ԼՂՀ հյուսիս-արևելյան սահմանում հերթապահության ժամանակ ցուցաբերել էր արիություն և նախաձեռնողականություն՝ ոչնչացնելով դիրք ներխուժած հակառակորդի դիվերսանտին:

Լոռու մարզում գրանցված ավելի քան **60 համատիրություններ** կառավարում են շուրջ 760 շենք՝ շուրջ 22,800 բնակարաններով՝ մարզի բնակարանային ֆոնդի շուրջ երկու երրորդը: 2011 թվականին բազմաբնակարան շենքերի շքամուտքերում տեղադրվել է շուրջ 640 լուսավորության ավտոմատ համակարգ:

2011 թվականին հաշմանդամ **յոթ զինծառայողի ընտանիք** երեք սենյականոց բնակարաններ են ստացել Սպիտակում և Ստեփանավանում:

Աշխատանքն ու վարձատրությունը

Լոռու մարզում տարեց-տարի ավելացել է աշխատողների վարձատրության մակարդակը: 2001-2010 թվականներին Լոռու մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը **քառապատկվել է**: 2010 թվականին Լոռու մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2004 թվականի կրկնապատիկն էր:

Աշխատատեղերի ստեղծման և զբաղվածության աստիճանական ընդլայնման արդյունքում Լոռու մարզում 2005-2007 թվականներին **կրճատվել է** չզբաղված, այդ թվում՝ գործազուրկ քաղաքացիների թիվը. 2007 թվականին չզբաղված քաղաքացիների թիվը Լոռու մարզում 2004 թվականի համեմատ նվազել էր **45 տոկոսով**: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով գործազրկությունը մարզում 2008 թվականին կտրուկ բարձրացել էր, սակայն հետագա տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքե-

Աշխատողների միջին անվանական աշխատավարձը Լոռու մարզում (դրամ)

որի շնորհիվ, Լոռու մարզում չզբաղված քաղաքացիների թիվը կրկին սկսել է նվազել. 2010 թվականին Լոռիում չզբաղվածների թիվը նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ՝ երեք հազար մարդով **պակաս էր**:

Լոռու մասնաբաժինը Հայաստանի արդյունաբերության ոլորտում զբաղվածների ընդհանուր ծավալում



2010 թվականին Լոռու մարզում զբաղվածների 12 տոկոսն աշխատում էր արդյունաբերության ոլորտում. արդյունաբերության մեջ զբաղվածների տեսակարար կշռով Լոռին հանրապետությունում երրորդն է: Զբաղված լոռեցիների շուրջ կեսն աշխատում է գյուղատնտեսության, իսկ 30 տոկոսից ավելին՝

ծառայությունների ոլորտում: Շինարարության ոլորտում աշխատում են Լոռու մարզում զբաղվածների շուրջ 6 տոկոսը. շինարարության մեջ զբաղվածների թվաքանակով և տեսակարար կշռով Լոռին Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Կոտայքի մարզին: 2006-2010 թվականներին Լոռու մարզում շինարարության մեջ զբաղվածների թիվը կրկնապատկվել է:

2010-2011 թվականներին Լոռու մարզում աշխատանքի է տեղավորվել շուրջ **2,100 աշխատանք** փնտրող, այդ թվում՝ 1270 կին՝ աշխատանքի տեղավորվածների ավելի քան 60 տոկոսը:

2010-2011 թվականներին Լոռու մարզում մասնագիտական ուսուցման դասընթացների է մասնակցել շուրջ **400 գործազուրկ**, այդ թվում՝ 290 կին, դասընթացներին մասնակցածների շուրջ 70 տոկոսը: Դասընթացն ավարտած շուրջ 200 գործազուրկ տեղավորվել է աշխատանքի:

2010-2011 թվականներին Լոռու մարզում կազմակերպվել են **աշխատանքի տոնավաճառներ**, ուր տարեց-տարի ավելի ակտիվ դերակատարում են ունենում գործատուները: Միայն 2011 թվականին աշխատանքի տոնավաճառին մասնակցել է **40 գործատու**՝ ներկայացնելով շուրջ **540 թափուր աշխատատեղ**:

2010-2011 թվականներին Լոռու մարզում շուրջ **1,050**, այդ թվում՝ ավելի քան 850 բանվորական աշխատատեղի համար աշխատուժի պահանջարկ է ներկայացրել շուրջ **200 գործատու**:

2009-2011 թվականներին Լոռու մարզում ավելի քան 205 միլիոն դրամի ընդհանուր ծավալով վարձատրվող հասարակական աշխատանքների ավելի քան 125 ծրագրում ընդգրկվել է շուրջ 300 աշխատանք փնտրող քաղաքացի:

Կրթությունը

Հանրապետության մարզերում 2010 թվականին նախադպրոցական հաստատությունների քանակով Լոռին զիջում էր միայն Արարատի մարզին: 2010 թվականին Լոռու մարզում նախադպրոցական հաստատությունների թիվը 2004 թվականի համեմատ **ավելացել է** մեկ տասներորդով:

2010 թվականին Հայաստանի Հանրապետության քաղաքային համայնքներում նախադպրոցական հաստատությունների թվով Լոռու մարզը զիջում էր

Նախադպրոցական հաստատությունների քանակը ՀՀ մարզերում (միավոր)



Տեղերի քանակը Լոռու մարզի նախադպրոցական հաստատություններում (միավոր)



միայն մայրաքաղաք Երևանին: 2010 թվականին Լոռու մարզի գյուղական համայնքներում գործել է մեկուկես անգամ **ավելի շատ** նախադպրոցական հաստատություն, քան 2004 թվականին:

2010 թվականին Լոռու մարզի նախադպրոցական հաստատություններում տեղերի քանակը 2005 թվականի համեմատ **ավելացել է** մեկ վեցերորդով:

2010 թվականին Լոռու մարզում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է** շուրջ մեկ քառորդով:

2010 թվականին Լոռու մարզի գյուղական համայնքներում գործող նախադպրոցական հաստատություններ հաճախել է 60 տոկոսով ավելի երեխա, քան 2004 թվականին:

2010 թվականին Լոռու մարզի գյուղական համայնքներում գործող նախադպրոցական հաստատություններ հաճախել է **ավելի շատ** երեխա, քան 2001-2009 թվականների որևէ տարում: 2010 թվականին Լոռու մարզի քաղաքային համայնքներում գործող նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակը 2001 թվականի համեմատ **ավելացել է** մեկ վեցերորդով:

Մանկավարժների քանակը ՀՀ մարզերի հանրակրթական դպրոցներում (մարդ)



2011 թվականին հանրապետության մարզերի հանրակրթական դպրոցներում մանկավարժների թվաքանակով Լոռին զիջում էր միայն Շիրակին:

2010/2011 ուսումնական տարում Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդող մանկավարժների թվաքանակը 2004/2005 ուսումնական տարվա համեմատ **ավելացել է** գրեթե մեկ տասներորդով:

2010 թվականին Լոռու մարզում գործել է նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական քառապատիկ ավելի հաստատություն, քան 2008 թվականին:

2010 թվականին Լոռին Հայաստանում արհեստագործական ուսումնական հաստատություններում ուսանողների առավել մեծ թվաքանակ ունեցող մարզերի եռյակում էր: 2010 թվականին Լոռու մարզում գործող արհեստագործական ուսումնական հաստատություններում սովորող, ինչպես նաև ընդունված ուսանողների թվաքանակն **ավելի քան կրկնապատկվել է**: Ընդ որում, 2010 թվականին Լոռու մարզի արհեստագործական ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողներն ընդգրկվել են բացառապես ուսուցման անվճար համակարգում:

2010 թվականին Լոռու արհեստագործական ուսումնական հաստատություններում դասավանդող մանկավարժների թվաքանակը 2008 թվականի համե-

Նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն-ներ ընդունվածների թվաքանակը ՀՀ մարզերում, 2011թ. (մարդ)



մատ քառապատիկ ավել էր՝ նախնական մասնագիտական հաստատություն-ներում մանկավարժների թվի **ամենամեծ աճը հանրապետությունում**, ընդ որում, նույն ժամանակահատվածում, արհեստագործական ուսումնական հաս-տատություններում դասավանդող մանկավարժների թվաքանակը հանրապե-տությունում **ավելացել է** միջինում շուրջ մեկուկես անգամ:

Հայաստանում մայրաքաղաք Երևանից և Շիրակի մարզից հետո Լոռիում են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդող **ամենամեծ թվաքանակով** մանկավարժները:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ու-սանողների թվաքանակը Լոռու մարզում (մարդ)



2010/2011 ուսումնական տարում Լոռու մարզի երեք բարձրագույն ուսումնական հաստատություններում և բուհերի երկու մասնաճյուղերում սովորում էր **երեքուկես անգամ ավելի** ուսանող, քան 2002/2003 ուսումնական տարում մարզի յոթ բուհերում և մեկ բուհական մասնաճյուղում միասին:

2010 թվականին Լոռու մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող դասախոսների թվաքանակը 2006 թվականի համեմատ **ավելացել է** 30 տոկոսով:

2007-2011 թվականներին Լոռու մարզի **40 քաղաքային** և **գյուղական** համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել է շուրջ **70 կրթական հաստատություն**:

2007-2011 թվականներին կառուցվել է **Տաշիր** քաղաքի թիվ 4 դպրոցը, 200 աշակերտական տեղով հանրակրթական դպրոցը **Լեռնանցքում**, շախմա-

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը՝ Վանաձորի շախմատի նորակառույց դպրոցում

Հիմնանորոգված Վ. Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը Ստեփանավանում

տի դպրոցը՝ **Վանաձոր** քաղաքում, դպրոցական մարզադահլիճներ՝ **Գյուլագարակ** և **Շիրակամուտ** համայնքներում, վերակառուցվել և ընդլայնվել է **Վահագնաձոր** համայնքի դպրոցը: Նախադպրոցական հաստատություններ են կառուցվել **Գարգառ, Արևաշող, Դարպաս** համայնքներում, հիմնանորոգվել՝ **Ալավերդի, Վանաձոր, Օձուն, Ձորագյուղ, Ճոճկան** համայնքներում: Ջեռուցման համակարգեր են կառուցվել **Ղուրսալ, Անտառամուտ, Գեղասարմ, Սարահարթ, Օձուն, Ալավերդի, Վանաձոր** համայնքների դպրոցներում, հիմնանորոգվել են **Վանաձորի** թիվ 2, թիվ 9 և թիվ 10 դպրոցների ջեռուցման համակարգերը:

2007-2011 թվականներին **Թումանյան, Դեբետ, Շահումյան, Սվերդլով, Դսեղ, Արդվի, Աբորի, Քարաձոր, Շնող, Գուգարք, Հարթագյուղ, Պրիվոլնոյե, Խնկոյան, Թեղուտ, Մարց, Մեծավան, Ուռուտ, Սպիտակ, Ստեփանավան, Լեռնապատ, Ախթալա, Տաշիր, Ֆիոլետովո, Ալավերդի** և **Վանաձոր** համայնքներում հիմնանորոգվել են հանրակրթական դպրոցներ, **Ալավերդի** քաղաքի արհեստագործական ուսումնարանը, **Թուֆենկյան** կրթական կենտրոնը, բժշկական քոլեջը, Մանկավարժական ինստիտուտի հանգրվանը և Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջը՝ **Վանաձորում**:

2010 թվականին հիմնանորոգվել է Լոռու մարզի **Արծնի** համայնքի դպրոցը՝ երկհարկանի դպրոցի աջակողմյան մասնաշենքը, փոխ-

վել է տանիքը, մանրահատակը, տեղադրվել են նոր դռներ ու լուսամուտներ, կառուցվել է կաթսայատուն: 2010 թվականին կահավորվել և շահագործման է հանձնվել **Սպիտակ** քաղաքի Դանիել Սահակյանի անվան թիվ 2 դպրոցի նորակառույց մարզադահլիճը՝ շուրջ 300 քառակուսի մետր մակերեսով, երկու հանդերձարանով, լոգարանով և սանհանգույցով:

Ստեփանավանի Վահան Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցի ուսումնական մասնաշենքում ամբողջությամբ իրականացվել են ներքին հարդարման, ճակատների արտաքին հարդարման, հատակների, դռների, պատուհանների, սանհանգույցների, ջեռուցման, ներքին էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու ներքին ցանցերի և կահավորման աշխատանքները:

2011 թվականի տարեսկզբին մարզի **108 միջնակարգ, 5 ավագ** և **30-ից ավելի** հիմնական դպրոցների նախնական զինվորական պատրաստության կաբինետները լիարժեքորեն կահավորված էին, մարզի բոլոր **163 դպրոցներն** ունեին համակարգիչներ, համակարգչային դասարաններ, էլեկտրոնային կապ:

2011 թվականին Լոռու մարզի հինգ նախադպրոցական հաստատություններում ջեռուցումն իրականացվել է. կենտրոնացված, երեսուն հաստատությունում ՝ տեղային, հինգում՝ գազի վառարաններով, տասնվեցում՝ փայտով: Մնացած հաստատություններում ջեռուցումն իրականացվել է էլեկտրաէներգիայով կամ այլ վառելիքով:

Լոռու մարզի տասնվեց դպրոցում ջեռուցումն իրականացվում է հեղուկ վառելիքով, **103 դպրոցում**՝ բնական գազով, քսանմեկում՝ էլեկտրաէներգիայով, քսաներեքում՝ փայտով:

Լոռու մարզի նախադպրոցական հինգ հաստատություններ՝ **Արևաշող, Լեռնանցք, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Սարահարթ** համայնքներում, որոնք սկսել էին գործել միջնակարգ դպրոցների շրջանակներում, ի վիճակի են եղել 2011 թվականից ինքնուրույն շարունակել նախադպրոցական ծրագրերի իրականացումը, արդյունքում՝ ընդգրկված երեխաների թվաքանակը մեկ տարում



Արևաշող համայնքի նորակառույց մանկապարտեզը

աճել է ավելի քան 170-ով, ընդ որում, 147-ը՝ անապահով ընտանիքներից, իսկ մանկավարժների թիվը ավելացել է քսանմեկով:

2010 թվականին Լոռու մարզի երեք տարածաշրջանային միջնակարգ դպրոցներում ներառական կրթության մեջ է ինտեգրվել **84 երեխա**: Ստեփանավանի թիվ 3 նախադպրոցական հաստատությունում ընդգրկվել են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ութ երեխա:

2010 թվականին վերապատրաստման դասընթացների մասնակցել են Լոռու մարզի դպրոցների ավագ դասարաններում առանձին առարկաներ, այդ թվում՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա դասավանդող **շուրջ հազար ուսուցիչներ**, Վանաձոր քաղաքի դպրոցների 20 մանկավարժ-հոգեբաններ մասնակցել են մեկշաբաթյա վերապատրաստման դասընթացների:

2010-2011 թվականներին Լոռու մարզի սոցիալապես անապահով 9-13 տարեկան շուրջ 600 դպրոցականներ ամառային հանգիստն անցկացրել են Հանքավանի **«Լուսաբաց»** մանկական ճամբարում:

2010-2011 թվականներին Լոռու մարզի ուսման գերազանց առաջադիմութ-

Սպիտակի թիվ 1 դպրոցի արդի դասասենյակում

յուն ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների 30-ից ավելի աշակերտներ և սովորողներ ստացել են **«Լոռու դպրոց»** հիմնադրամի անվանական կրթաթոշակ՝ 3,000-10,000 դրամի չափով:

2010-2011 թվականներին Լոռու մարզում **շուրջ 6 հազար** անապահով ընտանիքների դպրոցական երեխաներ ստացել են տասնմեկ անուն գրենական պիտույքներ և գրքեր:

2010-2011 թվականներին Լոռու հանրակրթական դպրոցների ավելի քան հարյուր աշակերտներ **հաղթել են** օլիմպիադաների հանրապետական փուլում, ընդ որում, մրցանակների և դիպլոմների գրեթե կեսը նվաճել են **Վանաձորի** ֆիզիկա-մաթեմատիկական դպրոցի սաները: Նույն դպրոցի մի քանի աշակերտներ իրավունք են նվաճել նաև մասնակցելու միջազգային օլիմպիադաների՝ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն և մաթեմատիկա առարկաներից, ինչն աննախադեպ է:

2011 թվականին հանրապետության **«Լավագույն ուսուցիչ»** է ճանաչվել Լոռու մարզի Վանաձորի մաթեմատիկական և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի քիմիայի ուսուցչուհի Նաիրա Հարությունյանը:

Առողջապահությունը

Լոռիում են հանրապետության մարզերում **ամենամեծ թվով** բժիշկները՝ Շիրակից հետո: 2007-2010 թվականներին բժիշկների թվաքանակը Լոռու մարզում ավելացել է շուրջ երեք տոկոսով: 2010 թվականին Լոռու մարզում բժիշկների թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով 2001 թվականի համեմատ ավելացել է գրեթե մեկ հինգերորդով:

Բժիշկների թվաքանակը Լոռու մարզում (մարդ)



2010 թվականին Լոռին միջին բուժանձնակազմի թվաքանակով հանրապետության մարզերի թվում երկրորդն էր՝ զիջելով միայն Շիրակին: 2010 թվա-

Միջին բուժանձնակազմի թվաքանակը Լոռու մարզում (մարդ)



կանին Լոռու մարզում միջին բուժանձնակազմի թվաքանակը **ամենամեծն էր** 2003-2010 թվականների ժամանակահատվածում: 2010 թվականին Լոռու մարզում միջին բուժանձնակազմի թվաքանակը տասը հազար բնակչի հաշվով 2003 թվականի համեմատ ավելացել է շուրջ վեց տոկոսով:

2010 թվականին Լոռու մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում մեկ շնչի հաշվով հաճախումների քանակը 2001 թվականի համեմատ **կրկնապատկվել է**, իսկ 2007 թվականի համեմատ՝ ավելացել է մեկ հինգերորդով:

2007-2011 թվականներին Լոռու մարզում ծավալուն կապիտալ ներդրումներ են իրականացվել առողջապահության ոլորտում:

2010-2011 թվականներին հիմնանորոգվել է **Ալավերդու** բժշկական կենտրոնի ստացիոնար բաժինը, կառուցվել է արտաքին կոյուղագիծ, թթվածնային ամբար՝ կենտրոնական սպասարկման ուղիներով, ինչպես նաև՝ ջերմամատակարարման նոր կաթսայատուն: Նոր սարքավորումներով հագեցած բժշկական կլինիկան կծառայի Լոռու և Տավուշի բնակիչներին: 2012 թվականին Ալավերդու բժշկական կենտրոնի հիմնանորոգումը շարունակվելու է:

Հիմնանորոգվել են **Տաշիր** քաղաքի հիվանդանոցը, **Մեծավան** համայնքի ծննդատունը, **Քարաձոր** համայնքի բուժմանկաբարձական կետը, **Շահումյանի** առողջության առաջնային պահպանման կենտրոնը. վերջինում աշխատանքները կավարտվեն 2012 թվականին:

2011 թվականին **Ստեփանավանի** բժշկական կենտրոնում հիմնանորոգվել է տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետը, վերազինվել է լաբորատոր ախտորոշիչ սարքավորումներով:

Արևաշող համայնքում կառուցվել է առողջության առաջնային պահպանման կենտրոն, Վանաձորում՝ դիահերձարան:

Ընթացքում է **Վանաձոր** քաղաքի Լ. Արեշյանի անվան թիվ 1 հիվանդանոցային համալիրի շինարարությունը, մանկական վերակենդանացման բաժան-

2009 թվականին Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Արևաշող համայնքում կառուցվել է Առողջության առաջնային պահպանման կենտրոն: Շինարարությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և համայնքի կատարած ներդրումների հաշվին:

«Նախքան երկրաշարժը մի պուճուր անշուք սենյակ էր էլի Արևաշողի բուժկետ կոչվածը: Վերջին քսան տարին, կարելի է ասել, գյուղում էդ էլ չի եղել: Երկու տարի առաջ կարգին ամբուլատորիա կառուցեցին՝ հիմքից: Ամեն ծառայությունը մեջը կա: Գալիս ենք, ճնշում էլ են չափում, շաքարով հիվանդի դեղն էլ են տալիս, սրտի աշխատանքն էլ են նայում, երեխեքին ամեն տեսակի պատվաստումներն էլ են անում: Այսինքն, արդեն էնքանով է լավ, որ ամեն մի հասարակ բանի համար Սպիտակ չենք գնում: Մի թուղթ է պետք ընկնում, գրում, տալիս են, մի դեղ է պետք ընկնում, շտապ բժշկի կարիք ենք ունենում, գալիս ենք ամբուլատորիա: Համ ամբուլատորիայի աշխատողն է իրան լավ զգում, որ էդ պայմաններում է աշխատում, համ մենք, որ նման սպասարկում ենք տեսնում»:

Ափիցարյան Թերեզա

մունք բացելու նպատակով վերանորոգվել է տարածք, հատկացվել են բժշկական սարքավորումներ:

2012 թվականին կկառուցվի **Ախթալայի** առողջության կենտրոնի նոր շենքը:

Ալավերդու բժշկական կենտրոնին հատկացվել է հատուկ բժշկական ծառայության շարժակազմ. կենտրոնի բժիշկների ուժերով Ալավերդու տարածաշրջանի համայնքներում մատուցվում են բժշկական խորհրդատվություն և լաբորատոր ախտորոշիչ ծառայություններ:

2010-2011 թվականներին **Սպիտակ** քաղաքի **Ստեփանավանի** և **Տաշիրի** տարածաշրջանների առողջապահական հաստատություններին տրամադրվել

են մի քանի տասնյակ միլիոն դրամի ժամանակակից բժշկական սարքավորումներ, բժշկական պարագաներ և կահույք:

2011 թվականին Լոռու մարզին տրամադրվել է **շարժական ատամնաբուժական կլինիկա**, որի միջոցով անվճար ատամնաբուժական բուժօգնություն և սպասարկում են ստանում մարզի մինչև տասնութ և վաթսունից բարձր տարիքի բոլոր բնակիչները: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանում է մարզի բոլոր առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմում գտնվող բուժական, մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը:

Ստեփանավանի բժշկական կենտրոնում հիմնվել և կահավորվել է **Մայրության** դպրոց:

2011 թվականին Լոռու մարզում շտապ օգնության ծառայություն իրականացնող ընկերությունները համալրվել են նոր ժամանակակից սարքավորումներով հագեցած **8 հատուկ սանիտարական մեքենաներով**, այդ թվում՝ մեկ ռեանիմոբիլով, դրանք սպասարկող անձնակազմը մասնակցել է վերապատրաստման դասընթացների. վերապատրաստվել են շուրջ **40 բժիշկ**, ավելի քան **35 բուժքույր** և 35 վարորդ:

2010-2011 թվականներին Լոռու մարզում վերապատրաստման դասընթացներին մասնակցել է ավելի քան **150 բժիշկ**: 2010-2011 թվականներին Լոռու մարզի առողջապահական հաստատությունների ավելի քան **220 միջին բուժաշխատողներ** վերապատրաստվել են վերարտադրողական առողջության, սեռական հիվանդությունների, ալերգիկ հիվանդությունների ուղղությամբ, ստացել են անվտանգ սննդի, նորածինների մաշկային հիվանդությունների, ֆիզիոթերապիայի, էլեկտրասրտագրման, ախտահանող բժշկական սարքավորումների հետ աշխատելու հմտություններ:

2010-2011 թվականներին Լոռու մարզում լիարժեքորեն ներդրվել է **ծննդօգնության հավաստագրերի համակարգը**, իրականացվում է ծննդօգնություն իրականացնող բուժհաստատությունների պարբերական մոնիթորինգ:

Վանաձորի թիվ 1 բժշկական կենտրոնի հիմնանորոգված ծննդատանը

2010-2011 թվականներին «Ջերմուկ», «Արզնի», «Գանձաղբյուր» առողջարաններ են ուղեգրվել Լոռու մարզի հատուկ (առանձին) և սոցիալական անապահով խմբերին պատկանող **ավելի քան 180 քաղաքացի**, իսկ «Արարատ» մոր և մանկան առողջարան և Ապարանի վերականգնողական առողջության կենտրոն՝ մինչև տասնութ տարեկան շուրջ 15 երեխա:

2010-2011 Լոռու մարզի առողջապահական հաստատությունները տարբեր բուժհաստատություններ ուղեգրել են **15,700 հոգու**, այդ թվում՝ Երևանի հիվանդանոցներ **3,370 երեխա և մեծահասակ**:

2010-2011 թվականներին Վանաձորի պոլիկլինիկաներում կազմակերպվել են մայրերի ինքնաջակցման խմբեր, խորհրդատվություններ, հոգե-շարժողականության խմբեր:

Սպիտակում **«Հույս Հայաստանին»** և **«Ֆրանսահայ միության»** մանկական բժշկական կենտրոնները մինչև տասնհինգ տարեկան երեխաներին տրամադրում են անվճար ստոմատոլոգիական օգնություն, հատկացնում անվճար դեղորայք:

2011 թվականին Լոռու մարզում բնակիչներն անցել են ակնաբուժական զննում. հետազոտվել է շուրջ **900 մարդ**, պետական պատվերով վիրահատվել է շուրջ **350 հոգի**, լազերային բուժում են ստացել **100 մարդ**, հետազոտված և կարիք ունեցող հիվանդներին անվճար հատկացվել են ակնոցներ:

Մշակույթն ու սպորտը

Լոռու մարզում 1998-2003 թվականներին գործել է մեկ, իսկ 2009-2010 թվականներին արդեն երեք մասնագիտացված պետական թատրոն:

2010 թվականին հանրապետության մարզերի պետական մասնագիտացված թատրոններում ներկայացումների **ամենամեծ քանակը**՝ 140 ներկայացում, բեմադրվել է Լոռու մարզում. ներկայացումների քանակով Լոռին Հայաստանում զիջում է միայն մայրաքաղաք Երևանին: 2010 թվականին հանրապետության մարզերում ներկայացումների 30 տոկոսը բեմադրվել է Լոռու մարզում: 2010 թվականին Լոռու մարզի պետական մասնագիտացված թատ-

Ներկայացումների քանակը Լոռու մարզում



Հանդիսատեսների թվաքանակը Լոռու մարզում



րոններում 2002 թվականի համեմատ բեմադրվել է գրեթե **երեք անգամ ավելի** ներկայացում:

2010 թվականին Լոռու պետական մասնագիտացված թատրոնների հանդիսատեսների թվաքանակը 2002 թվականի համեմատ **ավելացել է երեքուկես անգամ**, ինչն աներկբա վկայում է Լոռու մարզում մշակութային կյանքի ակտիվացման մասին:

Լոռու մարզում մշակութային կյանքի ակտիվացման մասին է վկայում նաև մարզի թանգարանների գործունեությունն ու դրանց հանդեպ հետաքրքրության **աննախադեպ աճը**: 2010 թվականին Լոռու մարզում գործող թանգարաններում ցուցադրությունների քանակն **ավելի էր,** քան նախորդ երկու տասնամյակների ընթացքում: 2010 թվականին Լոռու թանգարաններում ցուցադրությունների քանակը 2004 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Ցուցադրությունների քանակը Լոռու մարզում



2010 թվականին Լոռու թանգարանների այցելուների թվաքանակը հինգ անգամ ավելի էր, քան 2000 թվականին և կրկնակի ավելի, քան 2005 թվականին:

2010 թվականին Լոռու մարզի թանգարաններում աննախադեպ մեծ էր նաև այցելուների թվաքանակը:

Լոռու մարզի գյուղական համայնքներում 2010 թվականին մարզիկների թվաքանակը 2007 թվականի համեմատ **եռապատիկ ավելի էր**: Հանրապետության

Արևաշող համայնքի նորակառույց եկեղեցին

քաղաքային համայնքներում մարզիկների թվով Լոռին զիջում է միայն մայրաքաղաք Երևանին և Շիրակի մարզին:

Մարզիկների քանակը Լոռու մարզում (մարդ)



2007-2011 թվականներին Լոռու մարզի քսանհինգ քաղաքային և գյուղական համայնքներում կառուցվել և հիմնանորոգվել են մշակութային և մարզական հաստատություններ, համայնքային կենտրոններ:

Բերքի տոնը Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում

Ստեփանավան քաղաքում կառուցվել է մշակույթի պալատ, **Վանաձորում**՝ Ղարաքիլիսայի ճակատամարտին նվիրված հուշահամալիր, իսկ Դիմաց թաղամասում՝ **«Սուրբ Գրիգոր Նարեկացի»** Հայորդաց տունը: Համայնքային կենտրոններ են կառուցվել **Գեղասար, Հարթագյուղ, Արևաշող, Կաթնաջուր, Շիրակամուտ, Լեռնապատ** և **Գյուլագարակ** համայնքներում:

Ավելի քան երկու տասնամյակ տնակային պայմաններում գործող երկրագիտական թանգարանը տեղափոխվել է **վերանորոգված և լիարժեքորեն կահավորված** քարաշեն շենք:

Հիմնանորոգվել են **Վանաձորի** Արվեստի քոլեջը, մարզային գրադարանը, Է. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցը: Վերանորոգվել և վերականգնվել են **Լոռի բերդ ամրոցը**, **Ախթալայի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին**, **Օձունի վանքը**, **Բգավոր եկեղեցին, Սարահարթի եկեղեցին, Հնեվանքը, Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցին**, **Թումանյան, Ծաթեր, Մեծավան, Գարգառ, Դսեղ, Խնկոյան, Օձուն, Լեռնահովիտ, Կուրթան** համայնքներում, համայնքային կենտրոններ՝ **Օձուն, Փամբակ, Սարալանջ** համայնքներում, **Ստեփանավան** քաղաքի մարզադպրոցում կառուցվել է ջեռուցման համակարգ:

«Երկրագիտական թանգարանն ունի 34 հազար ցուցանմուշ: Երկար տարիներ անընդհատ տեղափոխումների արդյունքում այդ նմուշները կանգնել էին ոչնչացման վտանգի առջև, և հիմա, վերջապես, շենքային պայմաններ ստանալով, կարող ենք ի մի բերել այս ամենը և ստեղծել մեզ հարիր ցուցադրություն»:

Նաիրա Առաքելյան, Լոռու երկրագիտական թանգարանի տնօրեն

2014 թվականին կավարտվեն **Սանահին վանական համալիրի** ամբողջական վերականգնման աշխատանքները: Վանական համալիրը, որը ներառում է նաև **Զաքարյանների դամբարանը** և որտեղ գործել է **Մագիստրոսի ճեմարանը**, ուր դասավանդել են մշակութային և կրոնական նշանավոր գործիչներ Դիոսկորոս կաթողիկոսը, Անանիա, Հակոբ և Հովհաննես Սանահնեցիները,

Ստեփանավան քաղաքի հիմնանորոգված մշակույթի տունը

Սեղանի վրա ոսկեգույն մեդալներից փոքրիկ բուրգ է գոյանում, երբ Գայանեն որոշում է ցուցադրել թեթև ատլետիկայից հայաստանյան և միջազգային մրցաշարերում նվաճած բոլոր պարգևները: Քսանվեցամյա մարզուհին ծնվել է Սանկտ Պետերբուրգում: Երեք տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Վանաձոր: Բնավորությամբ աշխույժ երեխա լինելով՝ տասներեք տարեկանում որոշում է ունեցած էներգիայի ավելցուկը պարպել դասերից հետո՝ սպորտային որևէ խմբակ հաճախելով:

«Սկզբում ձեռքի գնդակ էի պարապում, բայց մեկ տարի անց հասկացա, որ խմբակային սպորտաձևն իմը չէ: Ուզում էի գեղարվեստական մարմնամարզությամբ զբաղվել, որովհետև շատ ճկուն էի ու մտածում էի, թե դիմեմ՝ չեն մերժելու: Բայց այդ ժամանակ արդեն տասնչորս տարեկան էի, տարիքս մեծ էր այդ սպորտաձևով զբաղվելու համար ու ինձ, բնականաբար, մերժեցին: Հետո առաջարկ ստացա՝ թեթև ատլետիկայով զբաղվել: Մարզադպրոցն էլ նոր էր բացվել: Համաձայնվեցի, գնացի ու ասեմ, որ շատ սիրեցի, հասկացա, որ դա այն էր, ինչ փնտրում էի ինքնադրսևորվելու համար»,— պատմում է Գայանե Բուլղադարյանը:

Մեկ տարի պարապելուց հետո մարզիչները մեծ առաջխաղացում են նկատում Գայանեի մոտ ու ընդգրկում Վանաձորի թեթև ատլետիկայի հավաքականի կազմում: 1999 թվականի համահայկական խաղերում Գայանեն, 400 մետր վազքուղին հաղթահարելով, գրավում է չորրորդ տեղը: Լուրջ հաջողություններ այս սպորտաձևում մարզուհին գրանցում է 2005 թվականից: Այդ տարի մասնակցում է Թեհրանում կազմակերպված մրցումներին և վերադառնում հաղթական ոսկե մեդալով՝ նվաճելով առաջին մրցանակը: 2011 թվականին Մալթայում կայացած մրցումներն ևս տպավորիչ ավարտ են ունենում Հայաստանը ներկայացնող աղջիկների հավաքականի համար: Նրանք գրավում են երկրորդ տեղը: 2012 թվականի փետրվարի 6-ին, հերթական անգամ, Թեհրանում կայացած մրցումներից Գայանեն Վանաձոր է վերադառնում հաղթանակած՝ առաջին տեղ և ոսկե մեդալ:

Վանաձորի ամենաարագավազ գեղեցկուհու սիրտը դեռ ազատ է: Հարազատները կատակում են, թե չի ծնվել այն հայորդին, ով կկարողանա բռնել վազքի չեմպիոնին: Թեթև ատլետիկայի վանաձորցի չեմպիոնուհին, աթլետիկային զուգընթաց, արդեն երեք տարի է զբաղվում է մարզչական գործունեությամբ: «Շատ եմ ուզում իմ փորձն ու գիտելիքները փոխանցել մեր փոքրիկներին: Մեր մարզադպրոցում հարյուրավոր երեխաներ են մարզվում ու կուզենամ տեսնել այն արդյունքները, որ ժամանակին ես եմ ցույց տվել: Ես հիսունից ավելի պարգևներ ունեմ ու երջանիկ կլինեմ, եթե իմ սանը կամ սանուհին ինձ գերազանցի»,— ասում է Գայանեն:

Ստեփանավանի վերանորոգված մարզադպրոցը

Գրիգոր Տուտեորդին և մեծ փիլիսոփա ու աստվածաբան Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, 1999 թվականին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում: 2010 թվականին վանքում տեղադրվել են բացօթյա բազմալեզու տեղեկատվական վահանակներ:

2010-2011 թվականներին Լոռու մարզի **հարյուրից ավելի** հուշարձաններ և դրանց շրջակա տարածքները մաքրվել և բարեկարգվել են: Կազմվել և հաստատվել են մարզի **195 հուշարձանների** պահպանության գոտիների ստեղծման նախագծերը:

2010-2011 թվականներին Լոռու մարզի բոլոր քաղաքային համայնքների հանրակրթական դպրոցներին **տրամադրվել է** շախմատի դասավանդման համար անհրաժեշտ գույք:

2011 թվականին Վանաձորի մշակութային կյանքի գոհարը՝ **Հովհաննես Աբելյանի անվան դրամատիկական պետական թատրոնը**, որի կամարները շնչում են մեծերի՝ Հովհաննես Աբելյանի և Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի ու Արուս Ոսկանյանի խաղով, մեծ շուքով նշեց իր ութսունամյակը: 2010-2011 թվականներին թատրոնում բեմադրվել են Շեքսպիրի «Լիր Արքա», Ս.Խալաթյանի «Հրադադար», Ա.Քալանթարյանի «Վաճառքի ենթակա

Վանաձորի երկրագիտական թանգարանի նոր շենքը

չէ», Ա.Այվազյանի «Առլեզ», Սարտրի «Հարգարժան Լիզի» պիեսները: Այդ տարիներին թատրոնը հանդես է եկել ավելի քան 200 ներկայացմամբ:

2011 թվականին Ալավերդիում կազմակերպվել է ավանդական **«Թատերական Լոռի»** հանրապետական փառատոնը, որին մասնակցել են Երևանի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Արմավիրի, Արցախի, նաև Վրաստանից՝ Զեստաֆոնի թատերախմբերը: «Թատերական Լոռի- 2010» 20-րդ հոբելյանական փառատոնին մասնակցել են շուրջ 18 թատրոններ և թատերախմբեր Հայաստանից, Արցախից և արտերկրից:

2009-2010 թվականներին **Դսեղ** համայնքում անցկացվել է «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոն, որը հյուրընկալել է երկու տասնյակից ավելի տիկնիկային թատրոններ և թատերախմբեր Հայաստանից, Արցախից, Ջավախքից, Սլովենիայից, Հունգարիայից, Վրաստանից, Չեխիայից, Բելգիայից, Բուլղարիայից, Դանիայից, Ֆրանսիայից, Շվեյցարիայից, Իրանից, Բելառուսից:

2010 թվականին Լոռու մարզի **Թումանյանի** տարածաշրջանում անցկացվել են բազմօրյա խճուղային **հեծանվավազքի մրցումներ**՝ Սանահինի կամուրջ-Օձուն, Սանահինի կամուրջ-Հաղպատ, Սանահինի կամուրջ-Ախլաթա երթուղիներով, որոնց մասնակցել են Հայաստանի, Վրաստանի, Իրանի, Մոլդովայի և

Թուֆենկյան հյուրանոցը

Ռուսաստանի հավաքականները, ինչպես նաև մարզիկներ՝ Իտալիայից և Շվեդիայից:

2011 թվականին Թեժ լեռան ստորոտում տեղի է ունեցել ավանդական **«Լոռվա Զմեռ»**՝ արդեն քառասունմեկերորդ մարզատոնահանդեսը, որին մասնակցել են շուրջ **18 հազար մարդ**:

2011 թվականին **Վանաձորում** անցկացվել է միջազգային կարգի սպորտի վարպետ Ռոբերտ Եղշատյանի հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի Հանրապետության պատանեկան առաջնությունը, Վանաձորի Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցում՝ ձեռքի գնդակի միջազգային մրցաշար՝ Հայաստանի և Վրաստանի թիմերի մասնակցությամբ, և մարմնամարզության հանրապետական մրցույթ՝ նվիրված Վաչագան Փանոյանի հիշատակին:

2011 թվականին Դիլիջանում դպրոցականների ամենամյա շախմատի օլիմպիադայի հանրապետական փուլում հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճել է **Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի թիմը**:

«Ես ցնցված եմ Լոռու բնությամբ, փարթամ անտառներով, գետերով և գյուղական բնակավայրերով»:

Սերժ Թանկյան, ռոք երաժիշտ, «System of a Down» ռոք խմբի մեներգիչ

Սոցիալական վիճակը

Լոռու մարզում, ընդհուպ մինչև 2007 թվականը, տարեց-տարի կրճատվել է աղքատության մակարդակը. 2001-2007 թվականներին Լոռու մարզում աղքատության մակարդակը **կրճատվել էր** կիսով չափ: Թեպետ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով հետագա տարիներին աղքատության մակարդակը Լոռիում զգալիորեն բարձրացել է, այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ աղքատության հաղթահարմանն ուղղված հասցեական քաղաքականության արդյունքում Լոռու մարզում շատ աղքատ տնային տնտեսությունների թիվը 2010 թվականից սկսել է նվազել. 2010 թվականին Լոռիում շատ աղքատ տնային տնտեսությունների թիվը 2009 թվականի համեմատ **կրճատվել է գրեթե մեկուկես անգամ**:

Լոռու մարզում տարեց-տարի **նվազել է** նպաստառու ընտանիքների թիվը. 2000-2010 թվականներին՝ տաս տարում, նպաստառու ընտանիքների թիվը Լոռիում նվազել է ավելի քան 80 տոկոսով: 2010 թվականին Լոռու մարզում նախաճգնաժամային 2007 թվականի համեմատ նպաստառու ընտանիքների թիվը նվազել է ավելի քան 30 տոկոսով:

Նպաստառու ընտանիքների քանակը Լոռու մարզում (հազար ընտանիք)



2011 թվականին Լոռու մարզում տասը հազար բնակչի հաշվով գրանցվել է մեկ քառորդով **ավելի քիչ** հանցագործություն, քան միջինը հանրապետությունում և երեք քառորդով պակաս, քան հարևան Վրաստանում:

2010-2011 թվականներին հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվել է ավելի քան **200 սայլակ, քայլակ, հենակ ու ձեռնափայտ**, ավելի քան **15 պրոթեզ**, ավելի քան **65 լսողական սարք**, պրոթեզավորվել է շուրջ 20 քաղաքացի:

2010-2011 թվականներին Լոռու մարզային գրադարանն իրականացրել է ծրագրեր, որոնցում լայնորեն ընդգրկվել են միայնակ տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ծնողազուրկ երեխաներ, անապահով բազմազավակ ընտանիքների դեռահասներ: Կույրերի համար իրականացվող **«Արև»** ծրագրում ընդգրկվել է ավելի քան 150 շահառու, նրանցից շատերն ավարտել են համապատասխան դասընթացներ: Տեսողական խնդիրներ ունեցող անձանց տրամադրված համակարգիչները միացված են նաև համացանցին:

2010 թվականին Վանաձորում անցկացվել է խուլ-համրերի Հայաստանի շախմատի առաջնությունը: 2011 թվականին խուլ-համրերի հանրապետական առաջնություններում Լոռու մարզի բնակիչ Սարգիս Աթաբեկյանը շախմատի մրցաշարում **նվաճել է երկրորդ մրցանակը**, իսկ ըմբշամարտիկ Գևորգ Սերոբյանը **դարձել է Հայաստանի չեմպիոն**, բրոնզ է նվաճել Սենիկ Սերոբյանը, ով դարձել է նաև **Եվրոպայի առաջնության արծաթե**, իսկ Գևորգը՝ **բրոնզե** մեդալակիր: Հաշմանդամային սպորտի հայկական ֆեդերացիայի կողմից 2010 թվականին անցկացված մրցաշարում բոչիա մարզաձևում Հայաստանի **չեմպիոն է դարձել** Նվեր Միրզոյանը, իսկ Շուշան Մելիքջանյանը՝ սեղանի թենիսի մրցանակակիր:

2011 թվականին Լոռու մարզի **130 հաշմանդամ երեխաներ** բժշկական խորհրդատվություն են ստացել Գերմանիայից ժամանած բժիշկների մոտ: Լոռու մարզի անապահով ընտանիքների 120 երեխաներ, այդ թվում՝ շուրջ 25 հաշմանդամներ, հանգստացել են ամառային ճամբարներում:

2010-2011 թվականներին Լոռու մարզում բարեգործական ճաշարաններից օգտվել է **հազարից ավելի տարեց**:

Գուգարքի տարածաշրջանային կենտրոն՝ Վանաձոր քաղաքում 2005 թվա-

կանից գործում է **Սոցիալական համալիր կենտրոնը**, որը Հայաստանի Հանրապետությունում առաջինն է:

2010-2011 թվականներն մարզում մանկատներ են տեղավորվել շուրջ **70 երեխաներ**, այդ թվում, ութը՝ մասնագիտացված մանկատուն: Մանկատնից դուրս են գրվել շուրջ **25 երեխաներ**: Կանխարգելվել է շուրջ **20 երեխայի** մուտքը մանկատուն: Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն ընդունելու նպատակով կատարվել է երեխաների և ընտանիքների ուսումնասիրություն, որի արդյունքում շուրջ **80 երեխա** ընդունվել և 70 երեխա դուրս է գրվել նշված հաստատությունից: Համապատասխան աշխատանքի և խորհրդատվության արդյունքում կանխարգելվել է 27 երեխայի մուտքը խնամքի հաստատություն:

Լոռու մարզի տասնյոթ՝ **Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Ալավերդի, Ախթալա, Թումանյան, Շամլուղ, Օձուն, Շնող, Դսեղ, Գուգարք, Մարգահովիտ, Սարչապետ, Մեծավան, Գյուլագարակ, Ձրաշեն, Արևաշող** համայնքներում ներդրվել են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր, ինչը հնարավորություն է ընձեռել համայնքներին՝ էլեկտրոնային եղանակով իրականացնելու բյուջետավորում, փաստաթղթաշրջանառություն, համայնքի ղեկավարի և ավագանու գործառույթներ, վարելու համայնքի բնակչության և կազմակերպությունների ռեգիստր:

2011 թվականի տարեսկզբից Լոռու մարզի 113 համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններից **95-ն ունեն համակարգիչներ**, **38-ը՝ ինտերնետ կապ**:

2010 թվականին Եվրոպական տարածաշրջանների ասամբլեայի (AER) բյուրոյի նիստում Լոռու մարզը **դարձել է ասամբեայի լիիրավ անդամ**, ինչը Եվրոմիության հետ համատեղ զարգացման ծրագրեր իրականացնելու հնարավորություն է ընձեռում մարզին:

2011 թվականին Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիայի (AIER) համաժողովին, Լոռու մարզը **դարձել է** Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիայի լիիրավ անդամ:

Լոռին հարուստ է հայի ձեռքով կանգնեցված քաղաքակրթության կոթողներով. Հաղպատ, Սանահին, Օձուն, Քոբայր՝ համայն մարդկության պատմա-մշակութային ժառանգության մաս են այլևս: Մարդու ոգու, ստեղծագործ մտքի ու հավատի այս ձեռակերտ հուշարձանները դարեր առաջ Լոռին դարձրել են կենտրոն: Եվ որոգայթը մերժողների ոստան Հաղպատը կոչվել է մայրաքաղաք ու դարձել աթոռանիստ:

Այսօր էլ լոռեցին ապագա է կերտում ոգով ու մտքով, սակայն ամենից առաջ կերտում է իր հավատով: Ոտքի է կանգնում լոռեցին՝ ամոքելով ավերիչ երկրաշարժի վերքերն ու վերականգնելով տնտեսական, հասարակական ու քաղաքական փոխակերպումների ընթացքում կորցրածը: Ու մինչ կյանքի փորձով իմաստնացած լոռվա մեծերը փորձում են համադրել աշնան արևի խորհուրդն ու ընկուզենու սաղարթի ներքո հնչող օրհնությունը, լոռվա քաղաքներում ու շեներում, ձորերում ու գագաթներին բարձր ու հպարտ զրնգում է հայ երիտասարդի՝ իր երկրի տարեկցի ու իր հողին հավատարիմ քաղաքացու, քսանմեկերորդ դարի հայի ձայնը:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Լոռու մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Լոռու մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը լոռեցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012